№ 10 (163) XV ՏԱՐԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ 1905

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
REDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ԳԱՐԱՒՈՐ ՊԱՅՔԱՐԸ

Զարհուրանք ու հսկայական խելագարութիւն. ահա թէ ինչով կարելի է բնորոշել Կովկասի ներկայ կացութիւնը։ Որքան և հեռու լինինք ազգայնական նեղսրտութիւնից, ինչքան և նողկալի լինի մեզ համար կըշտամբանք շպրտել մի ցեղի երեսին, այնուամենայնիւ ստիպուած ենք տխրութեամբ, սրտի խորին ցաւով արձանագրել, որ ամիսներից ի վեր Կովկասի մի ծայրից միւսը յեղյեղուող սոսկումները անհատների գործ չեն, այլ մի ամբողջ ժողովրդի, յատկապէս Թաթարական ժողովրդի։ Կատաղի ու արիւնարբու՝ նա մի օր, մոռացութեան արժանի մի նզոված օր, դուրս սողաց դեղին անապատներից և դիակներ կրծելով խաղաց դէպի մեր երկիրը. ինչպէս աւազի հեղեղ..

Որքա՞ն քաղաքակրթութիւններ են մեռել այդ ժողովրդի ծնած բռնակալութեան ոտքերի տակ, այլևս երբէք չը բարձրանալու համար։ Համամարդկային անհատնում էվոլիւցիայի մէջ ազգերը աշխարհ են գալիս իրենց խօսքն ասելու, իրենց հանճարի գեղեցիկ թափը չափելու։ Թաթարական ժողովուրդն էլ դարերից ի վեր իր մութ ուժերի արտայայտութիւնն է տալիս աշխարհին՝ աւերելով ու ոչնչացնելով այն բոլորը, ինչ մարդկային առաջադիմող միտքը երկնել է դարերի երկունքով, ինչ նրա հոգին ստեղծել է իր հոյակապ թռիչքներով։

Զարհուրելի անցեալ ունի այդ խաւար ու դժբախտ ժողովուրդն իր թիկունքին։ Թէմուրլէնգներն ու Չինգիսխանները մորթոտուած երեխաների արիւնով են լոգացել և իրանց արհաւրալի փառքը յաւերժացնելու համար մարդկային գանգերից կոթողներ կանգնեցրել։ Միամտաբար այդ անցեալը անդարձ համարեցինք, բայց Կովկասեան թիւրքերը չուզեցան մոռանալ իրենց „մեծ" հայրերի այդ „սխրագործութիւնները". այլ կերպ ի՞նչպէս բացատրել, որ նրանք դեռ սիրում են իրենց ձեռքով յօշոտուած երեխաների փորոտիքը շներին ձգել, ինչպէս Մինքենդում, և յղի կանանց արգանդը ճեղքել, վայելելու համար գոլ արեան հրէշաւոր հաճոյքը, ինչպէս Բագուում։

Աներկբայ ենք սակայն, որ այն օրը, երբ նրա ապագայ սերունդները կ'ազատուեն հայրերի արիւնածարաւ բնազդներից, դարերի կտակած զազրելի ատավիզմից, երբ նրանք ներկայ խաւարից ու գարշանքից կը բարձրանան մինչև մարդկայնութիւնը, զայրոյթով ու ամօթով կը հրաժարուին այդ ստորացուցիչ, այդ անփառունակ ու ոճիրներով հարուստ անցեալից։ Երբևիցէ կը գայ այդ օրը, անկասկած պիտի գայ, և ոչ ոք այնպէս կարօտ չէ նրա գալստեանը, այնպէս նախանձախնդիր չէ թաթար ցեղի կուլտուրական առաջադիմութեանը, որպէս հայ ժողովուրդը։

Եւ դա առանց խորունկ պատճառների չէ։

Մի անօրինակ ճակատագիր կամեցաւ, որ հայ ժողովուրդը, Արևելքի ժայռին մեխուած այդ Պրոմէթէոսը, իր չարատանջ թիկունքին կրի ասիական խուժանների բոլոր հարուածները, որ յունական իդէայի և ասիական վայրենի ցեղերի գազանային բնազդների միջև ժլատ հսկայական մենամարտը Պելոպոնէսից անցնի և հայկական բարձունքների վրայ յեղեղի ամբողջ դարեր։ Հոյակապ ու անհաւասար կռիւ, որի վախճանը դժուար է կանխատեսել։ Ապագան կ'ասի, թէ ո՞վ պիտի յաղթանակի. արդեօք փոքրիկ հայ ժողովուրդը, որ յամառ ու անյողդողդ շարունակում է իր քաղաքակրթական ծանր միսսիան, թէ՞ բազմամիլիոն խաւար ոյժերը, որոնք նոյնպիսի յամառութեամբ շարունակում են ըմբոստ մնալ քաղաքակրթական հասկացողութիւնների, լայն համամարդկային գաղափարների հանդէպ։ Եւ դարեր շարունակ ստեղծագործելու, առաջադիմելու մեր ձիգերը բաղխուեցին մեզ շրջապատող խուժադուժ ցեղերի անսանձ ու վայրենի կրքերին, բաղխուեցին ու խորտակուեցին։ Ահա ծագումը մեր անհատնում տառապանքի, ահա աղբիւրը պատմական չարիքի, որ մեր գլխին ծանրացաւ։ Զարհուրելի է մտածել։ Ո՞վ կարող է երբևիցէ հաշուի առնել մեր տուած բոլոր զոհերը, ո՞վ կարող է չափել մեր կսկծի խորութիւնը անթիւ յուսախաբութիւնների հանդէպ, երբ մեր եռանդը, մեր աշխատանքը վատնուել է, որպէս մրրիկների ցանած փոշի։ Մեր իրական պատմութիւնը անցեալի մեծ լռութեան գրքի մէջ է, ոչ ոք, ոչ ոք չի կարդացել այն՝ և չի կարդայ երբէք։

Ահաւոր դիլեմմայի առաջ ենք կանգնած այժմ։

Բազուկներս բարձրացնում ենք վարանելով, զարկում ենք ափսոսելով և նզովում ենք մեր հարուածը, երբ նա յաջող է, որովհետև կ'ուզէինք ո՛չ թէ աւերել, ոչնչացնել, այլ կրթել, բարձրացնել, առաջ տանել, և երբ մեզ են հարուածում, բռունցքը միշտ անողորմ է և ուժգին, մենք դարձեալ նզովում ենք այդ անմիտ հարուածը և մեր հոգու խորքում լալիս այն բութ, ոճրագործ անգիտակցութիւնը, որ անկարող է ըմբռնել մեր հոգին, մեր տենչերը, մեր գաղափարական վսեմ թռիչքները։ Մենք ե՞րբ ենք ատել և ո՞ւմ։

Եւ արտասուելի է մտածել, որ մեզ վիճակուած այս անօրինակ ճակատագիրը մինչև վերջին ծանր փորձութիւնները՝ չը դարձաւ մեզ համար քաղաքական իմաստութեան աղբիւր, չը սովորեցրեց մեզ այն, ինչ ամենասովորական կենդանիներին ասում է ինքնապաշտպանութեան բնազդը գոյութեան անողորմ կռիւի մէջ։ Տառապեցինք, անթիւ անարդարութիւններ ու զրկանք-

ներ կրեցինք աշխարհում և մնացինք միշտ լուռատես մեզ շրջապատող կասկածելի հարևանների վերաբերմամբ, սիրեցինք պատրանքները, ինքնախաբէութիւնը և մեզ քաղաքակրթական ծիգերի ամենագեղեցիկ արտայայտութիւնները այսպիսով ծնած օրից սիզիփեան աշխատանքներ եղան: Գայլերի և բորենիների մէջ՝ մենք առանց ժանիքների աշխարհ եկանք, և արիւնարբու, աւազակաբարոյ հարևանների կողքին ամբողջ դարեր բաւականացանք միայն բարին երազելով. պատմութեան անողորմ դասերը մեզ համար պառաւ տատերի հէքիաթներ եղան այն ժամանակ, երբ մեր չորս կողմում աւերիչ ուժերը ատամներով դանակ էին սրում: Մասսայօրէն չը պատրաստուեցինք երբէք և մենակ թողինք յեղափոխական մարտիկներին...

Մենք միշտ կոյր ենք եղել:

Մի ժամանակ նենգաւոր Բիւզանդիոնն էր մեզ յանձնում բարբարոս Արևելքին, թէև մենք միշտ նրա հովանին էինք փնտրում. այժմ էլ այդ պատմական ոճիրը յանձն է առել ցարերի դաւադիր, նենգ կառավարութիւնը, որի խելագար, արիւնարբու կատաղութիւնն անցաւ այն բոլորից, ինչ մենք երբևիցէ տեսել ենք մեր սև պատմութեան ընթացքում: Կասկածն անմտութիւն է: Ցարիզմը մեզ կոտորել տուեց Թիւրքիայում, դարձեալ նա՛ է, որ ոտքի է հանել մեր դէմ Կովկասի թաթարներին: Այս էլ սպիտակ ցարերի հովանին, որ փնտրեցինք, մուրացինք և երջանիկ էինք, երբ նա մեր գլխին տարածեց:

Ջարհուրելի կացութեան վախճանն ո՞ւր է. ե՞րբ պիտի ազատուենք զանազան „հզօր հովանիներից", որոնց տակ խեղդւում ենք:

Հայկական մանուկ յեղափոխութիւնը, որ իր հպարտ ճակատին կրում է առաջնորդող աստղը բոսորային ճաճանչներով, միակ միջոց գիտէ—զինուած կռիւ, մինչև խորտակել ոճիրներով յղփացած այս ռեժիմը, մինչև որ անկարելի դառնայ որևէ անիրաւութիւն մեր դժբախտ աշխարհում: Այս միջոցի երևակայիքը մենք արդէն տեսնում ենք. տաս տարի առաջ Թիւրքաց-Հայաստանից միայն ջարդերի ձայներ հասան աշխարհին, հայկակա՜ն ջարդերի, իսկ ա՞յժմ... պատկերը փոխուած է, ամբողջ աշխարհի մամուլը տենդային եռանդով արձանագրում է „հայ-թիւրքական կռիւները": Կռիւ և ո՛չ ջարդ. անպատիւ խայտառակ ջարդ. կռիւ և ոչ լացի, ու ողբի աղաղակներ, կռիւ և ոչ դանդաղ, օգնութեան ճիչեր:

Հսկայական թռիչք է, հրաշք է այս: Որքան և տխրալի լինին կորուստները, որքան և անմիտ ռուս կառավարութեան ձեռքով պատրաստուած և նրա հաճոյքի համար մղւող այդ արիւնահեղ ընդհարումները, այնուամենայնիւ մի գերագոյն մխիթարութիւն է մտածել, որ երեք անգամ թւով աւելի մի վայրենի ցեղ, որին օգնում է մի ամբողջ կառավարութիւն իր զօրքով, իր գաղտնի և յայտնի ագենտներով, այսօր հայ ժողովրդի մարտական ուժը, նրա ռազմական կորովը, մարտնչող ոգին ստիպուած է հաշւի առնել և յաճախ ընկճուել նրա առաջ: Գուցէ հինաւուրց տրագեդիայի վերջին գործողութիւնն է, ճնշող ահեղծուածի լուծումն է այս:

Պատմական նշանակալից ու խորհրդաւոր մոմենտ է: Գոնէ այժմ լռեն բոլոր փոքրոգի մտավախները, ուղերձների և թափորների ճառճռոցները, որոնց պատախանը եղել է միշտ թշնամու կրունկների և բռունցքի հարուածը. գոնէ այժմ լռեն կռնչացող ագռաւները, կարգի, հանդստութեան, անպատիւ խաղաղութեան տխուր առաքեալները, որոնց թուլամորթ քարոզների տակ միշտ ծածկուած է գարշելի „եսը", սեփական կաշւի ամօթալի հոգսը:

Ժողովուրդների կենսունակութիւնը, նրանց գոյութեան իրաւունքը աշխարհը գտնում է բռունցքի ուժի և հարուածի թափի մէջ. տարաբախտաբար, ուրիշ չափ չը կայ, տակաւին, ով գիտէ, որքան ժամանակ է հարկաւոր, որպէս զի այլ, աւելի գաղափարական, աւելի բարձր չափ գայ սահմանելու մարդկային իրաւունքը:

Իսկ մինչև այդ... լո՛ւռ, լո՛ւռ և յարգանք մարտնչողներին:

ԲՈՂՈՔԻ ԱՐԴԻՒՆՔԸ

Հ ա յ ժ ո ղ ո վ ո ւ ր դ

Հեռագիրը հաղորդեց, որ բարձրագոյն հրամանով վերադարձնում են հայ եկեղեցւոյ յափշտակուած կալուածները. նոյն բարձրագոյն հրամանով վերաբացւում են և հայ-ծխական ուսումնարանները, 1874 թւին հաստատուած ծրագրով:

Ի՞նչ պատահեց: „Թագաւոր-կայսրը բարեհաճեց զիջանել հայոց կաթողիկոսի աղերսանքներին և կովկասեան փոխարքայի միջնորդութեանը", — տեղեկացնում է մեզ հեռագիրը: Տարիներ առաջ Թագաւոր կայսրը բարեհաճեց փակել հայոց ուսումնարանները. և որովհետև շատ ուսումնարաններում երեխաները, խմբուած դասատների մէջ, չէին ցանկանում դուրս գալ, Թագաւոր-կայսրը բարեհաճեց հրամայել իր կօզակներին պոկ տալ երեխաներին նստարաններից, նագայկաներով վռնդել ուսումնարաններից: Երկու տարի առաջ Թագաւոր-կայսրը բարեհաճեց գրաւել հայ եկեղեցու դարևոր սեփականութիւնը. և որովհետև հայերը փակեցին կայսերական պաշտօնեաների առաջ եկեղեցու դռաները, Թագաւոր-կայսրը բարեհաճեց հրամայել իր կօզակներին գնդակահարել այդ մարդկանց: Այսօր նոյն Թագաւոր-կայսրը բարեհաճում է վերաբանալ ուսումնարանները և վերադարձնել եկեղեցական սեփականութիւնը:

Սա ի՞նչ տարօրինակ, ապշեցնող բարեհաճումներ են: „Հայոց կաթողիկոսը աղերսեց, կոմս Վ-ր-նց-վ-Դաշկովը միջնորդեց և ահա Թագաւոր կայսրը բարեհաճեց"—բացատրում են մեզ:

Բայց մի՞թէ հայոց կաթողիկոսը չէր աղերսում սրանից տասն և հինգ տարի առաջ, երբ հազարաւոր երեխաներ Թագաւոր-կայսեր „բարեհաճութեամբ" ուսումնարաններից փողոց շպրտուեցին, և ի՞նչու այն ժամանակ կովկասեան կառավարչապետը միջնորդ չը հանդիսացաւ կաթողիկոսի աղերսանքների և կայսերական բարեհաճութեան միջև. կամ ի՞նչու Թագաւոր-կայսեր այն օրուայ „բարեհաճումը" այնքան անբարեհաճ եղաւ: Հրա՞շք կատարուեց արդեօք: Արդեօք Թագաւոր-կայսեր բարձրագոյն սիրտը յանկարծ գթով և սիրո՞վ վառուեց հայ ազգի համար, կամ կաթողիկոսի աղերսանքները այսօր մի դիւթական ո՞ւժ ստացան, որ առաջ չունէին. թէ կայսերական ծառայութեան մէջ ծերացած կոմս Վօրօնցով-Դաշկովը յանկարծ իրաւունքի և արդարութեան առաքեա՞լ վերափոխուեց:

Ոչ, կատարուեց մի այլ բան, — ժ ո ղ ո վ ո ւ ր դ ը բ ո ղ ո ք ե ց: Բ ո ղ ո ք — այդ մի բառի մէջ պէտք է որոնել գաղտնիքը:

Հայ ժողովուրդը ցոյց տուեց, որ նա ընդունակ է գիտակցել — ոչ միայն գիտակցել, այլ և ցանկանալ, — ոչ միայն ցանկանալ, այլ և պահանջել: Եւ հրաշքը ինքնաբերաբար կատարուեց. կաթողիկոսի աղերսանքները յանկարծ մի անսովոր ուժ ստացան, պաշտօնական միջամտութիւնը անհրաժեշտ դարձաւ, իսկ բարձրագոյն „բարեհաճումը" վայրկենապէս փոխեց իր կերպարանքը:

Երբ տարիներ առաջ Թագաւոր-կայսրը, „բարեհաճեց" դնել իր „խնամակալ" թաթը մեր ուսումնարանների վրայ,

Նա գտաւ այնտեղ միմիայն երեխաներ—տղայք և աղջիկներ, որոնց միակ զէնքը—արտասուքն էր: Բայց տարիներ անցան, երեխաները մեծացան, տղամարդիկ դարձան: Ուսումնարանների բակերում սերմանած երեխաների մաքուր արտասուքները եկեղեցիների գաւիթներում արծիւ—ընձուկներ դարձան, մանկական աղերսոտ լացուկոծը պայթական զայրոյթի փոխւեց:

—Խնայեցէք մեզ, աղերսում էին այն ժամանակ երեխաները, ուսումնարաններում իրենց նստարանները գրկած: —Մի՛ք յանդգնիլ մօտենալ սրբանոցին այժմ տղամարդիկ, եկեղեցիների շեմքերը բռնած:—Մի՛ խլէք, լալիս էին այն ժամանակ երեխաները:—Չե՛նք տայ, գոչեցին այժմ տղամարդիկ և այդ սուրբ „չենք տայ-ն“ իրենց արիւնով դրոշմեցին:

Սա է պարզ իրողութիւնը: Եւ այսօր մենք տօնում ենք մեր առաջին յաղթանակը: Ո՞ւմ ենք պարտական մենք, ո՞ւմ պիտի բերենք մեր շնորհակալութիւնները, ո՞ւմ պիտի ուղղենք մեր երախտագիտութեան զգացմունքները:

Քե՛զ, Հ ա յ Ժ ո ղ ո վ ո ւ ր դ, և միայն քեզ: Դու էիր, որ պաշտպան կանգնեցիր քո նւիրական իրաւունքներին, Դու քաջութիւն ունեցար չը հնազանդւել դաժան կայսեր բարձրագոյն „բարեհաճման“, Դու քո արիւնով բողոքեցիր բռնութեան դէմ և տարար յաղթութիւնը:

Հ. Յ. Դ.

Կովկաս IV ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

Ո՞ՒՐ ՈՉ ԲԱՐՈՎ

Հայ փախստականներին...

Ո՞ւր ես շտապում, Հայ փախստական, ո՞ւր ոչ բարով:

Դու, որ քո ծով համբերութեամբ կրեցիր գերբնական սարսափները. որ անխռով տարար Լէնկ-Թէմուրների, Չինգիզ-Խաների չարչարանքները. որ զարմացրիր ամբողջ աշխարհը քո անյողդողդ կամքով՝ պատրաստ կրելու ճակատագրական խ ա չ դ մինչև Գողգոթայի կատարը. ի՞նչ պատահեց քեզ, ասա, ո՞ւր թողիր քո երկաթէ կամքը, քո ցեղի այդ երկնատուր առաքինութիւնը:

Տես, կինդ ուժասպառ՝ էլ չի կարողանում հետևել քեզ: Նա դժւարանում է փոխել իր ոտքը. նա երկունքի մէջ է: փոքրիկ զաւակդ կպել է մայրենի հողին, չի ուզում բաժանւել նրանից. հողը բռնել է նրան գուրգուրանքով, քաշում է դէպի իր ծոցը. իսկ դու շտապում ես, փախչում վատօրէն:

Ասա, ո՞ր խաբուսիկ պատրանքներն են քեզ քշում քո հարազատ աշխարհից. ո՞ր չար ոգին է առաջնորդում քեզ դէպի մութ անյայտութիւն, ուր գնում ես կորցնելու քեզ, քո ընտանիքը:

Գլուխդ կորցրած, դու չես տեսնում, թէ ինչպէս քեզ առաջնորդող չար ոգին իր դիւային քրքիջով աշխարհ է բռնել. թէ ինչպէս նա իր հռհռոցով աւետում է բոլոր թշնամիներիդ, որ վերջապէս յաջողեց քեզ կտրել քո մայրենի հողից և ձգել կորուստի ճանապարհը: Այն ոգին, որ դարեր առաջ կարողացաւ քեզանից խլել քո անթիւ հարազատները և քշել դէպի Լեհաստանի, Ռումանիայի ու Հնդկաստանի ծոցը՝ իրենց հայրենիքը ուրացնել տալու համար:

Արդեօք մոռա՞ցար այդ կորուստը, որ ողբաց ու ողբում է մինչև այսօր հայ աշխարհը, որ ողբում էիր դու և երէկ: Իսկ հիմա՞: Ի՞նչպէս չը սարսափեցիր ընդունելու կորստեանդ բաժակը, որ թոյն է ամբողջովին, որ գալիս է մեռցնելու կեանքիդ ողջ քաղցրութիւնը, կտրելու քեզ այն ամենից, ինչ որ նւիրական, ինչ որ սուրբ է քեզ համար, կորովատու և ստեղծագործող...

Ի՞նչ սրտով թողեցիր քո հասած արտը, որի հասկերը գլխիկոր ողբում են իրենց անտէրութիւնը, քո այգին, պարտէզը, քեզ սիրող լեռներն ու ձորերը, որոնց խորքերում դեռ արձագանքում են քո ժրաջան լծկանների վերջին բառաչները:

Ասա, ի՞նչ խղճով ոտքի տակ տւիր այն բոլոր զգացմունքները, որոնք այնչափ գորովով քո մէջ մտցնել ջանացին քո Սգաւոր Հայրենիքի ջերմ պաշտպանները՝ սկսած Վարդանից մինչև Պետօներն ու Բաբկէնները:

Դու չը վարանեցիր ուրանալ քո եղբայրներին, որոնք անսալով գոյութեան կռւի ձայնին, անհաւասար մարտի մէջ կեանք են տալիս, կեանք առնում, որոնք շատ տեղ անհամեմատ փոքր թւով քո ցեղի առնականութեան օրինակներ են տալիս՝ թշնամու հրոսակները փախուստի մատնելով:

Դու չ՛ուզեցիր գնահատել հայ կեանքի այդ վերածնութիւնը—կ ռ ւ ի, բ ո ղ ո ք ի, ա ր ե ա ն թափը—վաղուց մեր փնտրած ճանպարհը, որ մօտեցնում է մեզ աստուածային լ ո յ ս ի ն:

Դու փակեցիր աչքերդ, որ չը տեսնես մօտեցող լոյսը:

Դու խցեցիր քո ականջները չը լսելու համար այն ձայնը, որ խրոխտաբար քաջալերում է մեր մարտիկներին — կռւել ու կռւել, չը լսելու համար միևնոյն ձայնը, որ բողոքում է քո վատ փախուստի դէմ:

Դա ձայնը չէ այն չար ոգու, որից դու խաբւեցիր, այլ բարի ոգու, որ այսօր, աւելի քան երբէք, ուժ է զգում իր մէջ՝ բարձրացնելու հայի ռազմական կորովը, թև ու թիկունք տալու ամենքին, ով որ գիտէ գնահատել կեանքը:

Դու չ՛ուզեցիր անսալ այն ձայնին, որ միշտ կրկնում է, թէ քո գոյութիւնդ կարող ես յարատևել միակ հարազատ երկրիդ ծոցում, թէկուզ նա լինի վտանգներով լի, բայց ոչ երբէք անվտանգ օտարութեան մէջ, ուր դու կորած ես իսպառ...

Աշտի, յուսահատութեան, նզովքի ճիչն է, որ լսւում է քո սգաւոր հայրենիքի ամէն մի անկիւնից՝ քո տմարդի փախուստի դէմ:

Հող ու ջուր, թուփ ու թումբ, հով, ծով, սար ու քար, Սիս, Մասիս մի բերան դառած՝ աղաղակում են քեզ.

„Ո՛ւր ոչ բարով“... ՄԱՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՐԻՒՆԱՀԵՂ ԸՆԴՀԱՆՐՈՒՄՆԵՐԸ

„ԴՐՕՇԱԿ“Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
(ՈՒՂԱՐԿՈՒԱԾ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ)

Թիֆլիս, 6 սեպտեմբերի.

Անդրկովկասի վիճակը դառնում է աւելի սպառնական: Թիւրք խմբեր, լաւ զինւած, թալանեցին, քանդեցին և կրակեցին Բալախանին. հակառակ աններելի փաստերին՝ կառավարութիւնը զինաթափ չէ անում մահմեդական չարագործներին և ընդհակառակը մեղադրում է հայերին: Զօրքը ռմբակոծեց Բալախանիի հիւանդանոցը, ուր հայերը ամրացել էին՝ ինքնապաշտպանութեան համար: Ռուսկա-

նութիւնը դաւադրօրէն՝ շարունակում է զինաթափ անել հայերին։ Բագւի նահանգապետի թուլութիւնը վրդովեցուցիչ է։ Փոխարքայ Վօրօնցօվ-Դաշկօվ բաւականանում է, երկդիմի հեռագիրներ ուղարկելով։

—

Բագու, 6 սեպտեմբերի

Բագւի մէջ և շրջակայքում ոստիկանները միացած էին թիւրքերի հետ՝ գաղտնօրէն։ Ոստիկանութիւնը լի է թիւրք պաշտօնեաներով, որոնք ամենահլու գործիք են մահմեդական խուժանի ղեկավարների ձեռքում։ Բալախանիի, և Բիբիէյբաթի հայ բնակիչները զինաթափուած՝ դիմում են դէպի քաղաք. Թիւրքերը կրակեցին հայերին պատկանող հորերը և գործարանները։ Հայերի վնասը ահագին է։ Թիւրքերի գործարանները շարունակում են բանել։

—

Շուշի, 6 սեպտեմբերի

Հայ-թիւրքական ընդհարումը կատաղի էր։ Հայերի թաղում մօտ 200 տուն է այրուել։ Կրակ տուողները թիւրքերն էին, որոնք գաղտնօրէն ներս խուժեցին՝ խաղաղութիւնը կնքելուց յետոյ։ Հայերից սպանուած են 35, վիրաւորուած 75։ 3,000. գինուոր եկան քաղաք։ Հայերը յաղթելով թիւրքերին, գրաւեցին Ասկերանի անցքը։ Զանգեզուրի մէջ մահմեդականները սրբազան կռիւ են յայտարարել, և պատրաստւում են ընդհանուր յարձակումն գործելու։ Երևանում իրարանցում կայ։ Գանձակի վիճակը անհանգստացուցիչ է։ Ուրիշ կէտերում էլ դրութիւնը ծանր է, շնորհիւ կառավարութեան անխիղճ արարքներին։

—

Թիֆլիս, 7 սեպտեմբերի

Համազգային սոսկալի արկած։ Անդրկովկասի մահմեդական ազգաբնակութիւնը ոտքի է կանգնել՝ կրօնական կռիւ յայտարարելով քրիստոնեաներին։ Բագու, Շուշի, Դերբենտ, ինչպէս և Զանգեզուրի, Ջեբրաիլի և Ջիվանշիրի գաւառներում թիւրք ամբոխի խմբերը թալանում, քանդում, սպանում են։ Զօրքը, թւով քիչ, և առանց որոշ ղեկավարութեան, չէ կարողանում իր դերը կատարել։ Հայ քաղաքները և գիւղերը վտանգի մէջ են։ Շուշու և Բագւի արհաւիրքները աննկարագրելի են։

Բագու սպանուած են աւելի քան 1000, իսկ Շուշում՝ մօտ 900 թիւրք։ Սպանուած հայերի թիւը համեմատաբար փոքր են, մինչև 300։ Բայց հայերի նիւթական ու տնտեսական վնասը չափ չունի։ Շուշի այրուած են մօտ 400 տուն։ Մօտ 4000 շահսեվաններ եկել են Երասխի ափը և պատրաստւում են անցնել գետը ու ներս խուժել։ Երկիւղ կայ, որ Դաղստանի մահմեդականները ոտքի կը կանգնեն։ Համիսլամական շարժումը դարձել է սանձարձակ։ Թիւրք ղեկավարները յանդուգն են դարձել, վստահ՝ որ ոստիկանութիւնը լուրջ միջոցներ ձեռք չէ առնելու։ Կացութիւնը ողբերգական է։ Հայերը քաջաբար կռւում են, բայց զէնքի պակասութիւնը մեծ է։

—

Բագու, 11 սեպտեմբերի

Քաղաքում հաստատուած է զինուորուած խաղաղութիւն։ Գործ չունեցողների վիճակը շատ լուրջ է։ Թիւրքերի մտադրութիւնը պարզ է, նրանք ուզում են դուրս գցել հայերին նաւթարդիւնաբերական շրջանից։ Նաւթագործների մեծամասնութիւնը չէ վստահանում, առանց հաստատ երաշխաւորութեան, վերսկսելու աշխատանքները, ի բաց առնելով մի քանի եւրոպական ֆիրմաներ եւ Նօբէլի ժառանգներին, այդ հանգամանքը առաջ է բերել բանւոր դասակարգի մէջ սաստիկ գրգռում, ուստի շատ երկիւղ կայ նոր բարդութիւնների։

—

ԲԱԳՈՒ, 18 սեպտեմբերի

Զինուած խաղաղութիւն է։ Թիւրքերը առանց զինուորների չեն համարձակւում հայոց թաղը մտնել, հայերը՝ թիւրքերի թաղը։ Կառավարութիւնը անհամեմատ աւելի խիստ է դէպի հայերը, քան դէպի թիւրքերը։ Մինչև այժմ թնդանօթ է բռնել թիւրքերի տներից միայն մէկը, մինչ հայերի՝ 7-ը։ Զինուած հային խիստ բռնում, զինաթափ են անում, իսկ բերդանկաներով զինուած թիւրք ամբոխը պտտում է նոյնիսկ նահանգապետի բնակարանի առաջ։ Կառավարական պաշտօնեաները սկսած, յետին «գօրօդօվօյից» մինչև կօզակների գնդապետը, կաշառուած են թիւրքերից։

Գրաւուած է մեծ քանակութիւն զէնքերի։ Երկու օր առաջ Բալախանիի հիւանդանոցը խուզարկւեցաւ, իսկ երէկ մի ռուս աղախինի մատնութեամբ՝ «տեխնիկական նաղզօրի» շինութիւնը. գտել են մի քանի զէնքեր և ձերբակալել են մի հայ երիտասարդ։ Թիւրքերը շարունակում են գիշերով այրել հայերի տները. 25–30 տուն այրուած են։ Սպանուածների և վիրաւորների թիւը դեռ ճիշտ յայտնի չէ. հայերի կորուստը 80 է հաշւում, թիւրքերինը անհամեմատ աւելի։

—

ԲԱԳՈՒ, 19 սեպտեմբերի

Չը նայած խաղաղութեան՝ հայերով բռնուած թաղերում մասնակի սպանութիւնները շարունակւում են երկու կողմից։ Աշխատազուրկ բանւորներին, առանց ազգութեան խտրութեան՝ դուրս են ուղարկում։

—

ԲԱԳՈՒ, 22 սեպտեմբերի

Բռնուած են կարևոր նամակներ և թղթեր, որոնք ապացուցանում և հաստատում են մի մուսուլման կօմիտէի գոյութիւնը, որ կազմակերպել է Շուշու և Բագւի խառնակութիւնները։ Հակառակ կառավարութեան պնդումներին, նաւթարդիւնաբերողները հրաժարւում են վերսկսել աշխատանքները, առանց դրական երաշխաւորութեան։

ԲԱԳՒԻ ԱՂԷՏԻ ՍԿԻԶԲԸ

I

Բագու, 22 օգոստոսի

Շտապում եմ մի քանի տեղեկութիւններ հաղորդել ձեզ կրկին սկսուած խառնակութիւնների և կոտորածի մասին։ Ղարաբաղում կատարուած դէպքերը, մանաւանդ Շուշուց ստացուած լուրերը, այստեղի թիւրքերին սկսել էին խիստ գրգռել։ Վերջին օրերը անդադար լուրեր էինք առնում, որ թիւրքերը թէ այստեղ և թէ Բալախանի՝ անդադար ժողովներ էին անում և խորհրդակցում այն ձևերի մասին, թէ ինչպէս իրենց վրէժը առնեն այստեղի հայերից՝ Շուշում կատարուած դէպքերի պատճառով։ Թէ ինչ որոշումներ են կայացրել, մեզ յայտնի չէ։ Այդ միայն այժմ է կամաց-կամաց պարզւում։

Խառնակութիւնները սկսուեցին օգոստոսի 20-ին, ճաշից յետոյ, ժամը $4^1/_2$-ին. բայց թէ ինչ է եղել իսկական պատճառը — դեռ հնարաւորութիւն չենք ունեցել ստուգելու։ Միայն դէպքերը սկսուելուց 1—2 օր առաջ Թիւրքերի վերաբերմունքը դէպի հայերը կասկածել չէին տալիս, որ պէտք էր սպասել նրանց կողմից յարձակման։

Դէպքերից մի երկու օր առաջ հայերը դիմել են

զինուորական նահանգապետ Փադէէին և խնդրել, որ խիստ միջոցներ ձեռք առնէ թիւրքերի դէմ, որովհետև շատ խռովայոյզ նշաններ կային, որոնք ենթադրել էին տալիս, որ թիւրքերը պիտի սկսեն մի նոր աւերումն Բագուում։ Փադէէվը յայտնել է բացարձակապէս, որ երկու ժողովուրդներն էլ հանգիստ ու խաղաղ մնան, որ նա ոչ մէկին և ոչ միւսին ինայելու չէ և հրամայել է անխնայ կոտորել բոլորին, ով խռովութիւնների պատճառ կը դառնայ։ Յայտնել էր նոյնպէս, որ զօրքերը քաղաքի բոլոր մասերում պահուած են և հարկ եղած րոպէին դուրս կը գան դէպքերի տեղը՝ հինգ րոպէ շանցած։ Եւ իրաւ նա առաջին և երկրորդ օրը իր սասծը կատարեց. զինուորները անխնայ կերպով սկսեցին կոտորել ամենքին, ով ատրճանակ կամ հրացան էր բանեցնում, լինի հայ, թէ թիւրք։ Հայերը համոզուելով, որ այս անգամ կառավարութիւնը նախկին դիրքը չը պիտի բռնէ— դադարեցրին թշնամական գործողութիւնները, թողնելով ամեն բան զինուորներին։ Սակայն Փադէէի պէս չափազանց քիչ խելքի տէր մարդուն դժուար չէր թիւրքերին մոլորութեան մէջ ձգել։

II

Բագու, 23 գոստոսի

Օգոստոսի 20-ին, կէսօրից յետոյ, ժամի 4½ այս տեղ անսպասելի կերպով ընդհարումն սկսուեց հայերի և թիւրքերի միջև։ Կռիւը կատաղի էր։ Հրացանաձգութիւնը սարսափելի։ Խակոյն զօրքը միջամտեց և սկսեց անխտիր կերպով խփել թէ հայերին և թէ թիւրքերին, այսինքն նրանց, որոնք զէնքով կռուում էին փողոցում։ Ոչ կարելի էր դուրս գալ փողոց, ոչ էլ կանգնել պատուհանի մօտ։ Ամբողջ գիշերը հրացանաձգութիւնը շարունակուեց։

Օգոստոսի 21-ին ցերեկը քիչ հանդարտ էր, բայց գիշերը զօրքը սարսափելի կերպով կոտորում էր թիւրքերին, որոնք մօտիկ գիւղերից ահագին քանակութեամբ թափուել էին քաղաք, բոլորը զինուած։ Հայերը շատ լաւ դիրք էին բռնել և կռուում էին քաջաբար։ Դաշնակցութեան կենտ. զինուորական կոմիտէն շրջաբերականով կարգադրեց, որ դաշնակցական զինուորները առժամապէս չը մասնակցեն կռուին և սպասեն՝ տեսնելու, թէ ինչ դիրք պիտի բռնէ կառավարութիւնը։

Ամ այժմ զօրքն է գործում. զինուորները սաստիկ գրգռուած են թիւրքերի դէմ։ Այսօր Թիֆլիսից սպասւում է դարձել 2000 զինուոր։ Այս րոպէիս քաղաքում 4500 զինուոր կայ։

Բոլոր գործարանները դադարեցրել են աշխատանքը։ Բալախանիի նաւթահանքերում թիւրքերը մեծ հրդեհ առաջացրին։ Ամբողջ Բալախանի բռնկուած է կրակով։ Այրւում են բոլոր գործարանները։ Քաղաքում դեռ թալան չը կայ. բայց Բալախանիի թալանը չափ չունիմ։ Մինչև զօրք քիչ կայ. երևի այս անգամ կոտորածը շատ երկար կը տևի և սարսափելի դէպքեր տեղի կունենան։

Մինչև այժմ հայ սպանուածների թիւը 25-ից չի անցնում, այն էլ սպանուել են ոչ թէ թիւրքերի ձեռքով, այլ մեծ մասը զինուորների գնդակներից։ Թիւրք սպանուածների մասին ճիշտ տեղեկութիւն չունենք, բայց գիտենք, որ մի քանի հարիւրի է հասնում։ Երէկ գիշերը թիւրք խուժանը փորձեց ներս խուժել քաղաքը և մեծ զոհեր տուեց։ Զօրքը անխնայ կոտորել է։

Հայ կուսակցների տրամադրութիւնը լաւ է. բոլորը կազմ ու պատրաստ են։ Մի հայ կին փողոցում կռուի սկսուած օրը մի թիւրք սպանեց։

Այրւում են և Բիբիէյբաթի նաւթահանքերը։

III

Բագու, 26 օգոստոսի

Բօմանիի շրջակայքում տեղի ունեցած դէպքերից յետոյ կօզակները շրջապատեցին Մանթաշեանի, Փիթօյեանի և մի քանի ուրիշների նաւթահանքերը և առաջարկեցին հայ ազգաբնակութեանը՝ տեղափոխուել քաղաք իրենց պաշտպանութեան տակ։ Բայց նախքան առաջնորդելը, բոլորից վերցրին զէնքերը։

Հրդեհելով ու աւերելով Բալախանին, թիւրքերը ասում են, որ յետ են խլում հայերից այն հողերը, որոնք երբեմն իրենց էին պատկանում և որ հայերը յափշտակել են... Երէկ ամբողջ գիշեր այրւում էին կասպեան ընկերութեան նաւթի ամբարները։

Բիբի-Էյբաթում Մուխտարովի գործարանի թիւրքերը—լաւ կազմակերպուած մի աւազակախումբ—յարձակում գործեցին Մանթաշեան ընկ. նաւթահանքի վրայ, բայց բիթները ջարդուելով յետ դարձան։ Ապա միանալով գիւղի թիւրքերի հետ, աւերեցին խատիսեան և ընկ. պատկանող արհեստանոցը։ Այդտեղ բաւական թւով հայեր վիրաւորուեցին, մի քանին էլ սպանուեցին։

Թիւրքերի գործած հսկայական չարիքների համար ամենամեծ պատասխանատուներն են՝ Աղայեվ, Թոփչիբաշեվ և ընկ. Նրանք ամեն ջանք գործ են դնում, համոզելու նահանգապետ Փադէէվին, որ ամեն բանի հեղինակը հայերն են։ Նզովեալ ոստիկանութիւնը, կաշառակեր անասունների այդ վոհմակը, ամեն քայլափոխում արգելք է լինում մեզ և թիւրքերին նպաստում։ Պոնէ չէզոք դիրք բռնէր, անաչառ աչքով նայէր թիւրքերին ու հայերին, այն ժամանակ երևան կը գար վերջինների ուժը։ Փադէէվ քանիցս յայտարարել է, որ հայերը հանգիստ մնան, մի հատ գնդակ չարձակեն և որ ինքը կը մաքառէ թիւրքերի դէմ։

Բալախանիում վառուած են մեծ մասամբ հայերի նաւթահանքերը. տուժել են օտարազգիներ, ևս. նօբէլ Շիրայէվ և այլն։ Բօմանիի մասում թիւրքերը գիշերով յարձակուեցին Կրասիլնիկեանի, Փիթօյեանի ու Մանթաշեանի գործաւորների վրայ։ Տեղի է ունեցել շատ տաք կռիւ, որի միջոցին մեծ թւով թիւրքեր են կոտորուել հայերից՝ միայն երկուսը։ Նոյնպիսի մի կռիւ տեղի է ունեցել Միրզոյեանների նաւթահանքի շրջանում, ուր թիւրքերը դարձեալ մեծ կորուստներ են տուել, հայերը՝ մի երկու հոգի։ Յարձակում եղել է նաև Սովէտ Սըէզդի շինութեան վրայ, Սաբունչի գիւղում, ուր ծառայողների մեծ մասը հայ ու ռուս են։ Զբաղուած իրենց ահագին բազմութեան, թիւրքերը փախուստ են տուել, հանդիպելով ուժեղ դիմադրութեան։ Վրայ են հասել կօզակները, շրջապատել են զէնքը և առաջարկել հայերին զինաթափ լինել։ Հայերն էլ չուզենալով յանձնել իրենց զէնքերը, դիմադրել են և իբր թէ սպանել երկու կօզակ։ Տակաւին չը կարողացայ ստուգել, թէ որքան ճիշտ է այդ վերջին լուրը։

ՏԽՈՒՐ ՓԱՍՏԵՐ

Թիֆլիս 2 օգոստոսի

Գաւառներում շարունակւում է լարած դրութիւնը, թէև ոչ այնքան ծանր չափով։ Մասսային ընդհարումներ չը կան, սակայն օր չէ անցնում, որ թալանի ու ասպատակութեան զոհ չգնան հայ գիւղերը։ Ամենից հայաշատ գաւառներում նոյն իսկ, ուր հայերը ճնշող մեծամասնութիւն են կազմում թւի տեսակէտից՝ թալանները անպակաս են։ Ախալքալաքի շրջանն անգամ ազատ չէ մնում մահմեդականների յարձակումներից։

Վերջերս Ալէքսանդրօպոլի գաւառում ապրող ու Ախալքալաքի շրջանին սահմանակից թիւրքերը՝ օգտւելով կովկասում տիրող ընդհանուր իրարանցումից, յարձակւել են մի քանի հայ գիւղերի վրայ թալանի նպատակով։

Ախալքալաքի գաւառում թալանւած են հետևեալ գիւղերը հետևեալ չափերով.—Թ ա կ ճ ա յ գիւղից յուլիսի 16-ին տարել են 12 եզ, Յեղտիա գիւղից՝ 80 ձի, որոնցից 20 հատ ամենալաւը ընտրելով՝ միւսները յետ են թողել։ Կէօնդուբա՝ 11 գլուխ ապրանք, որոնցից 1-ը գտել են Դուլալիս գիւղի թիւրքերի նախրի մէջ. միւս 10 չկան։ Ո ւ ճ մ ա ն ա յ ի ց տարել են 6 եզ, փոքր Խանչիլլիից՝ 5 ձի։ Յուլիսի 15-ին Ալէքսանդրօպոլի ճանապարհին մի խումբ թիւրքեր մի քանի անգամ հրացան են արձակում Սաթխացիների վրայ և տանում 4 եզ. Փ ո կ ա յ ի ց՝ 3 եզ և 5՝ Դալկացիներից։ Ջարդել են երկու մարդու գլուխ։ Ս ա թ խ ա յ ի ց հովին սպանելով՝ տարել են 7 ձի։ Ա լ ա կ ե զ ի ց օրը ցերեկով տարել են 7 գլուխ ապրանք, Կարծախից 15, Խոպեայի արօտատեղերից 3. Ալակեազի արօտատեղերից ցերեկով փախցրել են մի կին և երեք օր պահելով բռնաբարած բաց են թողել։ Կնոջ դրութիւնը վտանգաւոր է։

Կազմակերպութիւնը այդ առիթով մարդիկ է ուղարկել Ախալքալաքի շրջանը՝ հայերին հովանաւորելու և գողացած ապրանքները յետ խլելու համար։

Երևանի շրջանում շուտով կը վերջանան դաշտային որոշ աշխատանքները, որից յետոյ սպասւում են յուզմունքներ. հէնց այժմեանից իրարանցման նշաններ կան. բաւական լաւ է կազմակերպւած այդ շրջանի զինւորական գործը...

Ղազախի գաւառապետ Արնոլդ, որի շնորհիւ հայերը բաւական ապահով վիճակի մէջ են ապրում, ազատ մահմեդականների յարձակումներից՝ վերջերս պիտի արտաքսէր իր պաշտօնից մի գողի ծեծած լինելու համար։ Այդ առիթով Ղազախի մի խումբ թիւրքեր համախոսական էին ներկայացրել փոխարքայի օգնականին, որով խնդրում էին Արնոլդի արտաքսումը։ Մի խումբ հայեր, որոնց միացան բարեբախտաբար նոյնքան թիւրքեր՝ երէկ ներկայացան փոխարքայի օգնականին ու պարզելով Արնոլդի օգտակար ծառայութիւնը՝ խնդրեցին նրան պաշտօնի մէջ թողնել... Հակառակ պարագայում—ասելացրին գաւառի հայ և թիւրք համերաշխ ներկայացուցիչները—դուք, վտանգի կենթարկէք ամբողջ Ղազախի բնակչութիւնը ու պատճառ կը դառնաք հայերի և թիւրքերի արիւնահեղ ընդհարումներին վերոյիշեալ գաւառում։ Փոխարքայի օգնականը այս անգամ լսեց խաղաղութիւնը գնահատողներին ու համաձայնւեց՝ Արնոլդին իր պաշտօնի մէջ թողնել...միայն մի պայմանով՝ որ նա այլևս մարդիկ չը ծեծէ։ Ո՞րպիսի թունաւոր հեգնութիւն։ Ամբողջ երկիրը քանդում, աւրում ու անպատիժ են մնում. մեծագոյն ոճրագործները հպարտօրէն քայլում են զոհերի դիակների վրայից, իսկ մի գաւառապետ, փոքր ի շատ արդար, արտաքսւում է իր պաշտօնից միայն այն պատճառով, որ յանդգնել է ծեծել մի աւազակի մի թիւրք գողի...

ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Նախիջևան, 23 օգոստոսի

Անցել է աւելի քան երկու ամիս Երևանի նահանգում տեղի ունեցած արիւնոտ աղէտներից,—և տակաւին բորբոքած մտքերը չեն խաղաղւել։ Կարծում ենք, այն ինչ որ կատարւեց մեր երկրի մէջ, վերջին ամիսների ընթացքում, բնաւ չէ կարող երաշխաւորել մեզ, թէ շուտով կը հանի երկու ընդհարւող ժողովուրդների կեանքում մի այնպիսի դրութիւն, ուր ներաքանչիւրը, միւսի իրաւունքները յանգելով, կը շարունակէ առաջ ընթանալ իր յատուկ հասարակական-կուլտուրական ճանապարհով։

Բաւական է միայն թեթև ակնարկ ձգել մեր շուրջը կատարւող անցքերի վրայ, ակամայ գնել տարածւող շշուկներին... Մոլեգնած ամբոխը, անձնատուր իր բարբարոսական բնազդներին, նորանոր զոհեր է պահանջում, արիւն ու կրակ է տենչում... Հայաբնակ գաւառներից շարունակ մեզ հասնում են յուզիչ, անմիխիթար տեղեկութիւնները։

Հայ գիւղացին չէ կարող դաշտ դուրս գալ, և եթէ գնում է ինքնապաշտպանութեան համար, ոստիկանը գալիս է ու խլում զէնքը։ Թիւրքը ասում է հային. „դու չը պէտք է հունձ անես, այդ դաշտերը մեր սեփականութիւնը պիտի դառնան“ Զմեռը մօտենում է և հայ գիւղացին պաշար չունի. նա չունի տուն ու ոճախ։ Կառավարութիւնը շարունակում է իր կողմնապահ ու զգուշի վերաբերմունքը։ Ամեն տեսակ խոչընդոտներ է գնում մասնաւոր անհատների ու խմբերի գործունէութեան դէմ, որոնք գալիս են հայ ժողովրդի ծով ցաւերը մոռցնելու... Յիշենք, թէ ինչպէս Երևանի նահանգապետը մեծ դժւարութեամբ թոյլատրեց փոխադրել Նախիջևանի գաւառը մի քանի վագոն հին իրեղէններ՝ շորեր, լաթեր ու գորգիքներ...

Այդ դեռ բաւական չէ. անամոթաբար խուզարկում էին արկղները... Պրինց Նապոլէոնը, Նախիջևանն ու գաւառը շրջելիս, մեծ մեծ խոստումներ արաւ հայ գիւղացիներին. խոստումները այնպէս էլ մնացին։

Կառավարութեան ներկայացուցիչները ոչինչ չեն անում, իսկ երկու ազգութիւններից կազմւած „խաղաղարար“ յանձնաժողովները ուզում են հասնել իրենց նպատակին անպատիւ միջոցներով,—մամուլի բերանը փակելով, ճշմարտութեան ձայնը խեղդելով։ Այդ յանձնաժողովները թիւրքերի գործն են նպաստաւորում։ Պաշտօնապէս առերեսս հաշտութիւն քարոզելով, նրանք քնացնում, հանգստացնում են դիւրահաւատ հայերին, իսկ թիւրքերը, օգտւելով ժամանակաւոր հանգստութիւնից և հայերի այդ տխմար դիւրահաւատութիւնից, շարունակում է գինւել, զէնք ու ռազմամթերք ամբարել ապագայ սխրագործութիւնների համար։ Զէնքը մեծ քանակութեամբ ներմուծւում է Թիւրքիայի և Պարսկաստանի սահմաններից։ Թ ի ւ ր ք ը ոչ մի միջոց չէ խնայում իր պատրաստութիւնների համար։ Եթէ վերսկսւեն հայ-թիւրքական ընդհարումները, երևակայում եմ, թէ որքան արիւն պիտի հոսի... Վերջին երեք ամսւայ ընթացքում թիւրքերը լաւ զինւեցին, իսկ հայե՞ր... Դիմադրութեան, ինքնապաշտպանութեան համար նրանք պատրաստ չեն։ Ուրիշ հանգամանք. առաջները թիւրքերը յարձակւելիս՝ ընկնում էին թալանի, յափշտակութեան ետևից, իսկ այսուհետև, քանի որ այլևս թալանելու ոչինչ չէ մնում, պիտի միայն կոտորեն ազգաբնակութիւնը, թշւառ հայ ազգաբնակութիւնը, պիտի ձգտեն բնաջինջ անել հայ տարրը և այդպիսով իրականացնեն իրենց քաղաքական, համիսլամական ծրագիրը։ Զարմանալու ոչինչ չի լինի, եթէ շուտով ականատես լինենք նորանոր արիւնհեղութիւնների՝ արդէն Գանձակի, Շուշու, Զանգեզուրի և այլ հարևան գաւառներում։

Հարկաւոր է լաւ ճանաչել մեր նենգ, խարդախ թշնամուն, որ զուրկ է ասպետական զգացումներից, հարկաւոր է լաւ ճանաչել նրան, որպէսզի ամեն անգամ անպատիւ կերպով խաբւած չը լինենք նրա տւած խոստումներից ու երաշխաւորութիւններից, որոնցով այնքան անհերելի դիւրահաւատութեամբ յափշտակւում է մեր բուրժուա երիտասարդութիւնը։ Ներկայ լռութիւնը մի ծանր կոշմար է... Արդէն խուլ կերպով լսւում է նոր արիւնալի մրրիկների որոտը, և հէնց այն տեղերից, ուր թիւրքերը միշտ ապահովում էին մեզ, թէ ոչինչ չի լինի...

ԱՂԷՏԻ ՎԱՅՐԵՐԻՑ

—

Թիֆլիս, 25 յուլիս.

Երևանի ընդհանուր նահանգապետ իշխան Նապոլէօն, այցելելով Նախիջևանի գաւառը, վերադարձաւ Թիֆլիս՝ փոխարքային զեկուցումն տալու: Շնորհիւ այդ զեկուցման, Ալիխանով Թիւրք գեներալը, որ յայտնի ու համարձակ խրախուսում էր Թիւրքերի աւազակութիւնները, յետ կանչուեց: Իշխանը իր զեկուցման մէջ, 19 կէտերից բաղկացած, պնդել է, որ հայերի կրած վնասները անպատճառ պահանջուեն Թիւրքերից, կամ գանձարանը ինքն տանայ Թիւրքերից: Պէտք է, ասել է, կազմել մի յանձնաժողով հայերի կրած վնասները որոշելու համար:

Բացի դրանից, զեկուցումը յայտարարում է, որ 1) նախայարձակ են եղել Թիւրքերը և ոչ թէ հայերը, ինչպէս ամեն կերպ աշխատել է ցոյց տալ Ալիխանով, 2) եղել է և դ ր ս ի դրդումն, այսինքն յարձակումները հայերի վրայ եղել են Թիւրքաց կառավարութեան դրդմամբ և Նախիջևանի խաները բաւական ոգևորուած են եղել այն մտքով, թէ կարող են նորից յետ առնել իրենց խանութիւնը: Մի խօսքով, ըթամիտ կառավարութիւնը այժմ համոզուած է, որ Թիւրքերի շարժումը քաղաքական բնաւորութիւն ևս ունեցել է, աւելի քան թէ ծրագրել էր բանսարկութիւնը: Ասում են, իշխանի զեկուցումը՝ ստիպել է փոխարքայ Վ ր ն-ցով-Դաշկովին փոխել կարծիքը և խոստովանել վտանգը: Ռուսները նոր են գլխի ընկել, որ Նախիջևանի խաները և Թիւրք զեկավարները ծրագրել էին ջնջել բոլոր հայերին Նախիջևանի և Շարուր-Դարալագեազի գաւառներում, որպէսզի մի ահագին տարածութեան վրայ—Պարսկաստանի և Թիւրքիայի սահմանագլխում—ունենան հօծ մահմեդական ազգաբնակութիւն:

Այդ ծրագիրը, անկասկած, կործանարար է և հայերի համար, ուստի այստեղ ամեն կերպ աշխատեցէք վերադարձնել տալ փախստականներին իրենց տեղերը: Վնասուածներին օգնում են երկրագործական գործիքներ, կենդանիներ, նիւթական օգնութիւն: Նոյնիսկ աշխատում են բաժանել հայերին Թիւրքերից, այնպէս որ այսուհետև հայերը և Թիւրքերը այլևս խառն չապրեն գիւղերում, այլ բոլորովին առանձնացած: Այդ ծրագրին հաւանութիւն է տուել և իշխան Նապոլէօնը և իր զեկուցման մէջ շեշտել է այդ հանգամանքը: Իշխան Բօնապարտ պահանջում է նոյնպէս, որ կառավարութիւնը օգնէ հայերին՝ վերադառնալ իրենց տեղերը, որպէսզի Թիւրքիայի և Պարսկաստանի սահմանագլխի վրայ քրիստոնեայ տարր լինի:

Այդպիսով Երևանի ընդհանուր-նահանգապետ Նապոլէօն կողմնակի կերպով իր զեկուցումների մէջ հաստատել է գոյութիւնը այն սուլթանական ծրագրի, որի մասին նորերս յայտարարեց „Դրօշակի" մէջ, որտեղից և այդ լուրը անցաւ եւրոպական մամուլի մէջ:

Սակայն, չը նայելով, որ կառավարութիւնը ինքը յայտնել է վտանգը, դարձեալ վախենում է ազդու միջոցներ ձեռք առնել Թիւրքերի դէմ, երկիւղ կրելով թէ „հայերը Թիւրքերի ապստամբութեան դէպքում գուցէ չը կամենան կամ անզօր լինեն օգնելու իրեն :

—

Նախիջևանի աղէտի վայրերում գործում էին երկու հոգևորականներ՝ Մեսրոպ և Կարապետ վարդապետները: Վերջինս ներկայացրեց փոխարքային ընդարձակ զեկուցագիր, իսկ առաջինը մի փաստական տեղեկագիր պրինց Նապոլէօնին: Ահա մի քանի քաղուածքներ այդ տեղեկագրից:

1) Ն ա խ ի ջ և ա ն քաղաքը—ենթարկեց յարձակման 12 մայիսի. 195 հայ խանութներից բոլորովին թալանեցին 180. կտրուած են 20 դրամարկղներ: Այդ օր սպանեցին 49 հայեր, որոնց դիակները այրվեցին. վիրաւորուած են 12 հոգի: Հայերի կրած վնասն է 1,285,366 րուբլի: Այդ ահագին կողոպուտի մէջ մինչև 10,000 րուբլի ապրանք:

2) Թ ա զ ա ք ե ն դ—արուարձան քաղաքի, ենթարկեց յարձակման մայիսի 12-ին. ամբողջովին թալանեց 13-ին: Կողոպտուած է և եկեղեցին, այրուած է մի տուն: Բնակիչները փախել են քաղաք, գիւղը ամայի է: Թալանուած է գոյք 33,249 րուբլու:

3) Հ ա ջ ի վ ա ր գիւղ, ենթարկեց յարձակման մայիսի 13-ին: Ամբողջովին թալանուած է. կողոպտուած է եկեղեցին, այրուած են 12 տներ, սպանուած 5 հոգի, վիրաւորուած 4, կողոպտուած է 30,449 րուբլու գոյք: Մնացած գիւղացիները փախել են. գիւղը՝ ամայի է:

4) Ե օ խ ա ր ի - Ո ւ զ ո ւ ն դ ա գիւղ—ենթարկեց յարձակման 12 մայիսի: Բոլոր տները կողոպտուած են, ինչպէս և եկեղեցին: Այրուած է մի տուն: Սպանուած՝ 2, վիրաւոր 1, գոյք յափշտակուած—40,913 ր. 77 կ.: Բնակիչները փախել են, գիւղը ամայի է:

5) Դ ի զ ո ւ ր օ տ գիւղը ենթարկեց յարձակման 13 մայիսի: Բոլոր տները կողոպտուած են, ինչպէս և եկեղեցին: Բնակիչները փախել են Շխմահմուդ գիւղը: Գիւղը ամայի է: Սպանուած է 1 հոգի, վիրաւորուած 1 հոգի: Կողոպտուած 9,181 րուբլու գոյք:

6) Ն ա զ ա ր ա բ ա դ գիւղը ենթարկեց յարձակման 13-ին: Բոլոր տները կողոպտուած են. մի քանիսը այրուած. բնակիչները փախել են. ամայի է. կողոպտուած է եկեղեցին, սպանուած 2 հոգի, վիրաւոր՝ 1 հոգի. կողոպտուած՝ 107,311 րուբլու գոյք:

Ջ ա հ ո ւ կ մեծ գիւղը—ենթարկեց յարձակման մայիսի 12-ին: կողոպտուած է ամբողջովին, նաև եկեղեցին և դպրոցը. այրուած են 4 տուն և 8 խանութ: Բնակիչները ապրում են Շխմահմուդ գիւղում, Ալիքամատում և քաղաքում, տները թալնուած են և ամայի: Սպանուած է 51 հոգի, վիրաւորուած 14 հոգի, գոյք կողոպտուած—393,535 րուբլու:

Մ ա մ ա ր զ ա - Դ ի զ ա գիւղ, ենթարկեց յարձակման 11-ին: Կողոպտուած է ամբողջովին, նաև եկեղեցին. բնակիչները ապրում են Շխմահմուդ և Գիւլթափա գիւղերում, սպանուած 3 հոգի, վիրաւորուած 1 հոգի. կողոպտուած 16,412 ր. գոյք:

9) Խ ա լ խ ա լ գիւղ—ենթարկեց յարձակման մայիսի 13-ին, կողոպտուած է ամբողջովին, նաև եկեղեցին: Բնակիչները փախել են, վիրաւորուած է 2 հոգի. Յափշտակ. 68,991 ր. գոյք:

10) Ա լ ա գ ի օ զ Մ ա զ ր ա գիւղ—ենթարկեց յարձակման մայիսի 14-ին, կողոպտուած ամբողջովին, նաև եկեղեցին. բնակիչները ապրում են Շխմահմուդում: Այրուած է 6 տուն, սպանուած 2 հոգի, վիրաւորուած 4 հոգի: Յափշտակուած է 81,442 ր. գոյք:

11) Ն օ ր ս գիւղ, ենթարկեց յարձակման մայիսի 15-ին: Կողոպտուած է ամբողջապէս, նաև եկեղեցին և դպրոցը: Այրուած են շատ տներ: Յայտնի չէ սպանուածների և վիրաւորների թիւը, ինչպէս և յափշտակուած գոյքի քանակութիւնը:

12) Կ ա ր ա բ ա բ ա գիւղ—ենթարկեց յարձակման մայիսի 13-ին: Կողոպտուած է ամբողջովին, սպանուած 2 հոգի, յափշտակուած է 43,931 ր. գոյք:

13) Ա ր ի ն ջ գիւղ, ենթարկեց յարձակման մայիսի 14-ին. կողոպտուած է ամբողջովին. նաև եկեղեցին. բնակիչները փախել են. գիւղը ամայի է. սպանուած է 2 հոգի, գոյք յափշտակուած—103,447 ր.:

14) Գ ի չ ա ձ ո ր գիւղ—ենթարկուած յարձակման մայիսի 16-ին, կողոպտուած է ամբողջովին նաև եկեղեցին: Այրուած է մի տուն, բնակիչներ փախել են. սպանուած 2 հոգի, յափշտակուած գոյք—72,791 րուբլու:

Տեղեկագրի մէջ այս նոյն կարգով ցուցակագրուած են 48 գիւղ, ենթարկուած յարձակման:

Ահա եզրակացութիւնը:

Մայիսի 13-ից Թուրքերը յարձակման ենթարկեցին Նախիջևան քաղաքը և 47 գիւղեր, որոնցից վերջնականապէս աւերուած են և ամայացած բնակիչներից 19 գիւղ. կիսակործան են, բայց ոչ ամայացած 10 գիւղ, զրկել են իրենց նախրի մի մասից 18 գիւղ: Քաղաքում և գաւառում ըսպանուած են 231 հոգի, վիրաւորուած 59 հոգի, անհետացած 9 հոգի, թալանուած գոյքերի ընդհանուր արժէքն է, այսինքն յայտնի եղած մինչև 16 յունիս 1905 թ., ընդամէնը 2,609,054 րուբլի:

Նախիջևան գաւառի բոլոր հայ գիւղերից անվնաս են մնացել միայն 5-ը, իսկ թիւրք գիւղերից, որոնց թիւը 3 անգամ աւելի է, քան հայերինը, վնասուել է միայն մի փոքր գիւղ՝ Խթկուան, ուր 10—15 տուն կայ։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

(ԵՐԵՍՈՒՆՁՈՐՍԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Պետերբուրգ, 1 սեպտեմբեր.

Պատրաստւում էի գրել ձեզ օրւայ քաղաքական կատակերգութեան մասին, որ „պետական դումա“ է կոչւում, շարադրւած կայսերական պալատում, և սարքւած՝ ներկայացնելու այն հսկայական բեմի վրայ, որի անունն է պարլամենտական Ռուսաստան.

Սակայն վիթխարի որոտը, որ հնչեց Կովկասեան լեռներից—վայր գլորեց իմ գրիչը։ Ծաղրելու սիրտ չը մնաց, և ոչ էլ ախորժակ „ծրագրի“ մասին խորհելու,—մայրենի երկրում արիւն է հոսում, գիակները թափւում են ինչպէս աշնան տերևներ, ժողովրդեան աչքերից արիւն է կաթում...

Աւա՜ղ։ Ցեղափոխութեան արիւնը չէ այդ, որ այնքան ուժով ըմբոստութեան ծիլն է կերակրում, և ոչ էլ մարտական գրոհը, որ այնքան սրտեր վարեց վերջին տարիները, ցարերի շնչով դեղնացած երկրի բոլոր ծայրերում...

Եղբայրասպան կռիւ է այդ։

Մի կռիւ, որի բերած ամօթն և նախատինքը անկարող պիտի լինենք լւանալ դարեր շարունակ, կռիւ, յօրինած ցարական գլուխների մէջ և իրագործւած կոյր մոլեռանդութեան բազուկներով։

Որպիսի ծանր ամօթ։ Որքա՜ն մեծ դժբախտութիւն։ Շարքաշ աշխատաւոր, գաղափարով տոգորւած հայ ժողովրդի ջանքերը ապարդիւն անցան։ Ոչ մի բան չ՚օգնեց.—ճառերն ու թափօրը, խաղաղասիրական կոմիտէները ու հրապարակային յորդորները՝ ուժ չ՚ունեցան զսպելու մարդակերութեան կիրքը, բռնկւած կոյր ամբոխի ծոցում, և բորբոքւած պոլիտիկոսների բերանով։ Ամաչելու փոխարէն՝ այդ պոլիտիկոսները խաբել սկսեցին, զգաստանալու տեղ՝ դաւերը կրկնապատկեցին։ Եւ ճիշտ այն օրերին, երբ հայերը՝ Ղուշի և Բագու, Երևան և Գանձակ՝ ժողովներից դուրս գալով հաշտութեան աւետիք էին տարածում իրենց շուրջը, թիւրքերը՝ ընդհակառակը, զինւելու և յարձակւելու նոր ծրագիրն էին յօրինում, համոզւած որ հասել է ժամը պանիսլամիզմի թագաւորութեան, այնքա՜ն փայփայւած Համիդի պալատում...

Այդ „ծրագիրների“ պտուղը դուք տեսաք և տեսնում էք։ Ամբողջ գաւառներ սուրի և հուրի մատնւած, արիւն տների մէջ և հրապարակների վրայ, դիակների կոյտեր՝ քաղաքներում, տներ՝ հրդեհի ճարակ, ամբողջ համայնքներ՝ փախուստի, սովի, կրօնափոխութեան ենթակայ, իրաւունքը՝ ոտնակոխ, մարդասպանութիւնը՝ թեւատարած...

Եւ այդ հսկայական դժբախտութեան ծանր ու մաշող օրերին՝ ողբերգութեան շարադրողները՝ մի քանիսը Պետերբուրգ, միւսները Կ. Պոլիս, և նրանց գործակալները Կովկաս—հանգիստ, խաղաղ, գոհունակութեան ժպիտը երեսին։ Կարծէք մեռնողները մարդիկ չեն, այլ ճանճեր, և հոսողը մարդկային արիւն չէ, այլ գետերի ջուր...

Արեան օրերը կ՚անցնին։

Կը հասնի նոր օր, պատմական հաշւետւութեան օրը, երբ համերաշխութեան գաղափարի ներկայացուցիչ ժողովուրդը, որ թիւրքերին համերաշխութեան կոչ էր անում, հպարտութեամբ կը յիշի անցած վիշտը, երբ ինքը թիւրք ժողովուրդի նորագոյն սերունդը մինչև ականջները կը կարմրի՝ ծնողների կատարած ստորագոյն „քաջագործութեան“ համար.—բայց մինչև այդ երջանիկ օրվայ գալուստը կայ մի այլ հաշւետւութիւն,—պատասխանատւութեան ինդիրը, որ ինչպէս բարոյական մեծագոյն խնդիր, դրւած է մեր առջև, հրամայական և անհերքելի։

Ովքեր են պատասխանատուները—այն եղակի չարագործները, որոնք կազմակերպում են ոճիրը, բայց չեն մասնակցում, որոնք արիւն են տարածում, բայց արիւն չեն տալիս։ Բազմաթիւ են նրանք և տեսանելի նոյնիսկ „թագստեան“ մէջ։ Ցարքեր են դիրքով, զգեստով, կրօնով, ձևերով—բայց կապած եղեռնի շղթայով, ներքուստ ծանօթ միմեանց, յարիշտակւած մեծագոյն ոճրի արդիւնքով...

Ո՞վ չէ ճանաչում այն պատասխանատու ոճրագործներին։ Նրանց անունները քաջ յայտնի են և՛ ժամադարմական գաղտնի վարչութեանը, և՛ յեղափոխական մարմիններին, և՛ թիւրք ամբոխի ղեկավարներին, ինչպէս և բոլոր նրանց, որոնք աչք ունեն տեսնելու և գլուխ՝ խորհելու...

Ահա մի քանիսը։

Կոմս Վորոնցով-Դաշկովը,—Կովկասեան նոր փոխարքայ։ Նա եկաւ ձիթենու տերևով բարևներ և խոստումներ բերեց իր Մեծից, բայց խաղաղութեան և բեմորմների տեղ՝ արիւն տարածեց ամբողջ երկրի մէջ, առատ ինչպէս ռազմի դաշտում։ Եւ այս անխիղճ գեներալը, որ երբեմն Ալէքսանդր III-ի մտերիմ լինելու գժբախտ համբաւն ունէր, այնքա՜ն անամօթ գտնւեց, որ եղեռնի օրերին՝ փոխանակ ազէտի վայրը գնալու, ապաստանեց Հանքային ջրերը, կիսալուսկի բարձունքից՝ իր գործը դիտելու համար...

Գենեռալ Շիրենկին, առաջինի օգնականը, Պլեվնեան դպրոցի աշակերտ, որ ուղարկւեց Պետերբուրգից իբրև պոլիցիական մասի կառավարիչ, և այնտեղից մեր երկիրը բերեց ցաւ, արիւն, սուգ և կոտրած։ Նա է, որ լիազօրութիւն, աւելի ճիշտ՝ մասնագիտութիւն ունի՝ ըստեսելու և դաւեր սարքելու։ Նա՝ որ այս անօրինակ ոճրի յենակետն է, թիւրք ոստիկանների հովանաւորը...

Կապիտալիստ Թաղիև—Եղբրի դիմակաւոր գործակալը, նա որ մարդասպանների ամբողջ վոհմակ է կերակրում, ներշնչող սպանիչների, քաղաքական դայլ՝ գառան զգեստով։

Նախիջևանի խանը, որ թէև սուլթանական ագենտ և կոտրածների ստորագոյն հեղինակ, շարունակում վարել անբախտ աւանի քաղաքապետի պաշտօնը, անպատիժ և անհաշիւ։

Գենեռալ Ալիխանով, էպոլետակիր պանիսլամիստը, որ „կարգի“ փոխարէն ուր գնաց արիւն տա-

բածեց և մարդասպանների աջակիցն ու հովանաւորն եղաւ։

Ահմեդ բէկ Աղայեվ—Բագուի կրուշեվանը միաժամանակ տրւած և սուլթանին և ցարին. մարմնացումը՝ նենգութեան, ներկայացուցիչը պանիսլամիզմի և Իլդըզ-Քէօշքի, փետրվարեան կոտորածների նախակարապետը, ոճրագործ և լրտես, դաւադիր և մատնիչ։

Թօփչիբաշեվ, դիմակաւորւած Աղայեվ, համիսլամականութեան պօլիտիկոս—երգիչը, դաւադիր՝ խմբագիր անւան տակ, էմիսար՝ պատգամաւորի տիտղոսով։

Վէքիլօվ—դաւադիր ժողովների ոգին, անմիտ խուժանի գաղտնի ղեկավար, չարագործ վատթարագոյն տեսակի։ Հայատեաց, մարդատեաց...

Մահմեդ բէկօվ—ոստիկանական նշանազգեստով Թիւրքական էմիսէր, էմիսէրի պաշտօնով՝ կարգապահութեան պաշտօնեայ, մարդասպան և աւազակ։

Ահա և դրանց միւս գործակիցները. . . . .

. . . .

Ու այդ բոլորի համախոհները՝ Երեւան, Շուշի, Թիֆլիս, Գանձակ, Գօրիս, Օրդուբաթ... ոմանք պօլիցիականի զգեստով, միւսները մօլլայի չալման գլխին, ոմանք բէգերի կամ խաների տիտղոսով վարագուրւած, բարեկամ ոստիկանապետների, մտերիմներ ժանդարմական պաշտօնեաների... Նրանք, որ Թիւրքիայից զէնքեր և քարոզիչներ բերեցին, հարեւանը հարեւանի դէմ զինեցին անխիղճ գործիք եղան բռնապետութեան ձեռքին, և այսքան չարիքի պատճառ դարձան։ Միթէ, յիրաւի կարծում են, որ նրանց դաւերի հետքերը չեն գտնւած և գաղտնիքը մնացել է անթափանցելի... Սխալւում են չարաչար։ Միայն Վօրօնցօվ-Դաշկովն է, որ կոյր է ձեւանում, միայն հայկական արեան ծարաւներն են, որ չը տեսնելու են տալիս *...

Իսկ ոճրին մասնակից ոստիկանապետներն ու նահանգապետները, ժանդարմական վարչութեան դիմակաւոր պաշտօնեաները, որոնց սիրտը դեռ չէ կշտացել այսքա՞ն արիւնից, հեծեծանքի այս անծայր համերգից։ Միթէ միամտօրէն շարունակում են կարծել, որ նրանց անունները ոչ ոք չը գիտէ, և կամ իսպառ գաղտնիք են նրանց ծրագրներն ու հրամանները, նրանց գրչով ստորագրած արիւնոտ կարգադրութիւնները։

Մոլորութիւն է այդ։

Այլ ևս ոչինչ չի կայ ծածուկ, ոչինչ գաղտնի։ Անմեղ արեան մէջ եռացող ցասումը, այլ ևս չափ ու սահման չունի և հատուցումն է պահանջում, հատուցումն յանուն այն յաւիտենական ոյժի, որ պսպում է ոճիրը, և սանձ դնում ոճրագործների բերանին։

Պատիժ քաղաքական ոճրագործների, ովքեր են լինեն—ռուս, հայ, թիւրք, պաշտօնեայ թէ հպատակ։

Պատիժ ոճրագործներին...

Է. ԱԿՆՈՒՆԻ

* Ծանօթ. Դաշնակցութեան Կովկասեան Կոմիտէներից մէկը ուղարկել է մեզ մի քանի հեռագիրների պատճէնները —ձեռք բերւած գաղտնի ճանապարհով—որոնք, իբրեւ նըմուշ, գաղափար են տալիս՝ թէ ինչ պատրաստութիւնների վրայ էին Թիւրք պրոպագանդիստները։ Ահա երկուսը դրանցից, թարգմանւած ռուսերէնից։

Շուշի, յունիսի 13։ (հասցէն). „Գիշերը հասայ Գանձակ և Թիֆլիս առ այժմ աջողութիւն չը կայ։ Կ՚իմանաս։ Այստեղ տեղական պայմանները աննպաստ են. Մանրամասնութիւնը նամակով։

Միրզարահիմ։

Բագու, յունիսի 10 (հասցէն). „Թօփչիբաշեվ գնայ Երեւան, Բախշալլա՝ Թէհրան։ Մենք Թիֆլիս ենք։ Հեռագիրը Գիւլախմեդօվին։—

Նաղիբէկօվ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՅԱՂԹՈՒԹԻՒՆԸ

(Թղթակցութիւն)

Թիֆլիս, 5 օգոստոսի.

Կովկասեան հայութիւնը ցնծութեան մէջ է... Կարծես բոլորը մի րոպէ մոռացել են Բագուի, Նախիջեւանի աղէտները և այն բոլոր դաժան ու դժբախտ մոմենտները, որոնցով լի է մեր հասարակական-քաղաքական պատմութիւնը։

Այսօրւայ ուկազով ցարը վերադարձնում է հայ ժողովրդին նրանից խլած եկեղեցական գոյքերն ու իրաւունք տալիս վերստին բաց անել ապօրինի կերպով փակած հայ եկեղեցական-ծխական դպրոցները։ Վերջապէս Ռուսաստանի ներքին քաղաքականութեան ներկայացուցիչները կայսրի բերանով խոստովանում են, որ անհրաժեշտ է փոփոխել այն կանոնադրութիւնները, որոնք վերաբերում են ազգաբնակութեան հայկական մասին և խանգարում նրա կանոնաւոր խաղաղ զարգացումը։ „Մենք շնորհում ենք, ասում է կայսրը, հայ լուսաւորչական հոգեւորականութեան յօգուտ ժողովրդի՝ լայն լուսաւորական գործունէութիւն ունենալու միջոցներ“։

Հայ հասարակութեան այժմեան խնդութիւնը հետաքրքրական մի երեւոյթ է. մեր ժողովուրդը զգում է, որ ինքը մի անմոռանալի յաղթութիւն է տարել. նա զգում է, որ վերջին երեք տարիների ընթացքում մի անհաւասար, դըժւարին կռիւ է մղել ռուս կառավարութեան դէմ և յետ է ստանում այն բոլորն, ինչ որ իրենից աւազակաբար յափշտակած են։ 1898 թւականի մարտի 26-ի օրէնքը հայ դպրոցների փակման և դրանց գոյքերի գրաւման մասին և 1903 թ. յունիսի 12-ի օրէնքը հայ եկեղեցական կալւածքների գրաւման վերաբերմամբ, եղան այն երկու մեծ հարւածները, որոնցով ռուս բիւրօկրատիան կարծում էր միանգամայն ոտնակոխ անել հայ ժողովրդին, սպանել նրա հասարակական-մտաւոր կեանքը։ Սակայն ռուսաց ներքին քաղաքականութեան կոյր ու անմիտ վարիչները չարաչար սխալւեցին իրենց ակնկալութիւնների մէջ։ Հայ ժողովուրդը իր յարատեւ կռւով ցոյց տւեց, որ ինքը մի անխօս ոչխար չէ, ինչպէս երեւակայում էին զանազան Գոլիցիններ ու Պլէվներ։ Ռուսահայ ժողովրդի մէջ սկսեց մի նոր տրամադրութիւն, որ երբեմնակի այս ու այնտեղ դուրս էր ցայտում հուժկու վրիժառութեամբ։ Դա յեղափոխական գաղափարի յաղթանակն էր, յեղափոխական մտքի յաղթական մուտքը հայ ժողովրդի աշխարհայեացքի մէջ։ Ինչ որ երկար տարիների ընթացքում գուցէ անկարող պիտի լինէին քարոզելու հայ յեղափոխականութեան առաքեալները, ռուս բիւրօկրատիան կարողացաւ 2—3 տարւայ մէջ անել,—մղել հայ ժողովրդին դէպի քաղաքական կռիւ, որի պտուղները այսօր ասպարէզի վրայ են։

Աւելորդ ենք համարում այստեղ կանգ առնել այդ

կուի մոմենտների վրայ, մի առ մի յիշեցնել այն բոլորը, ինչ որ զգացել մտածել է ռուսահայը վերջին տասն տարիների մէջ, մանաւանդ այս օրերս, երբ Բագուի, Նախիջևանի զոհերի արիւնը տակաւին չի չորացել... Հայ ժողովուրդը ցոյց տուեց ամբողջ կուլտուրական աշխարհին, որ գիտէ մարտնչել իր հասարակական շահերի պաշտպանութեան համար, գիտէ կուել, անողոք յարձակումներ գործել, գաղափարական դրօշակը բարձր պահելու համար։

Սակայն ստիպուած ենք մատնանիշ անել, որ ժողովրդական ուրախութիւնը տեղ-տեղ չափ ու սահմանից անցնում է, ընդունելով տգեղ կերպարանք։ Ամբոխին, մասսային ներելի է, երբ սա գիտակցութեան սահմանն անցնելով, ընկնում է լոկ զգացողական աշխարհը և ինքնամոռացութեան մէջ շատ բուռն կերպով արտայայտում իր զգացմունքները. բայց ի՞նչ ասել երիտասարդների, ինտելիգենտների մի խմբի մասին, որ նոյնիսկ մամուլի միջոցով անվեջ գովասանքներ է շռայլում կառավարութեան ներկայացուցիչներին... Քաղաքական հեռատեսութեան նշան չէ այդքան հրճւանք ցոյց տալը։ Մի՞թէ մենք պէտք է գովաբանենք այն թշնամուն, որ դեռ երեկ մեզ ոտնակոխ էր անում, մի՞թէ շնորհակալութիւն, երախտիք պիտի արտայայտենք ամեն մի աւազակի, ոճրագործի, որ երեկ մեր գոյքը յափշտակեց, կողոպտեց, կոպիտ վիրաւորանք հասցրեց մեզ, իսկ այսօր այդ բոլորը մեզ, իբրև օրինական տիրոջ, կրկին յետ է դարձնում...

Վերջապէս ի՞նչ երաշխաւորութիւն ունենք, թէ վաղը նոյն կերպով չը պէտք է վարուեն, անպատուեն մեզ, ինչպէս և առաջ։ Պետութեան ներքին քաղաքականութիւնը՝ դա մի հողմաղաց է, որ ենթակայ է զանազան քամիների ազդեցութեանը։ Մեր դարևոր յարաբերութիւնները ռուս կառավարութեան հետ թող դաս լինի հայ հասկացող մասի համար, որպէսզի զգուշութեամբ վերաբերուենք ցարի կառավարութեան իւրաքանչիւր քայլին։ Դա մի նենգ, սպանիչ քաղաքականութիւն է եղել, որին հայերը, տարաբախտաբար, միամտօրէն հաւատ են ընծայել, մի քաղաքականութիւն, որը մեզ այնքան բազմաթիւ չարիքներ է հասցրել և հասցնում է։ Եթէ կառավարութիւնը, վերադարձնելով հայերիս իրաւունքները, կամենում է մեզ խաղաղացնել, եթէ նա այդ տեսակ միջոցներով կամենում է հանգստացնել հայ ժողովրդի գրգռած միտքը՝ ապա մենք էլ չըպիտի մոռանանք, որ դրանով մեր կռիւը չի վերջանում, հետևապէս զէնքերը վայր դնել ու ժանգի մատնել հարկաւոր չէ. մենք կազմ ու պատրաստ պէտք է լինենք նոր և անակնկալ դէպքերի առջև, որ մեզ համար անսպասելի կերպով կարող է ստեղծել կառավարական նենգ քաղաքականութիւնը...

Օգոստոսի 7-ին կաթողիկոսի հրամանով Կովկասի բոլոր հայ եկեղեցիներում կատարելու են գոհացողական մաղթանքներ ցարի համար, օգոստոս 1-ի ուկազի առիթով։ Հաւատաւոր հայեր այդ օրը պէտք է խռնուին եկեղեցիներում և ունկնդիր լինեն փառաբանական երգեցողութեանը, միմեանց շնորհաւորեն։ Այդ տօնական իրարանցման մէջ ժողովուրդը որևէ աղօթք պիտի մրմնջա՞յ ի յիշատակ այն հերոսների, որոնց արիւնով գնեց այսօրուայ մեր յաղթութիւնը, մեր իրաւունքը... Չենք կասկածում... Գանձակի, Թիֆլիսի, Բագի և այլ տեղերի հայկական ցոյցերի զոհերը թո՞ղ գէթ այժմ յիշատակուեն, իբրև գաղափարի համար իրենց մատաղ կեանքերը նուիրած զինուորները։ Խոնարհուենք հարիւրաւոր շիրիմների առջև, այն թանկագին անունների առջև, որոնք անջնջելի յիշատակ թողեցին հայ յեղափոխական պատմութեան մէջ...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՎԻՃԱԿԸ

Վան, 1 օգոստոսի

Բացի սովամահ լինելու դէպքերից, որ սկսած է յաճախակի երևան գալ, սովորական իրողութիւն է՝ քաղցածութիւնից գաղթելը։ Գաղթականի առաջ այժմ չի կանգնած պատասխանը կամ Ռուսաստանը։ Ընդհակառակը, նա բոլորովին կորցրել է իր տրամադրութիւնը դէպի այդ կոստաբեր ճանապարհները։ Այժմ գաղթում են մի նահանգից կամ մի գաւառից միւսը, աղատութիւն վայրագ հարկահաւաքների, սելաֆատէրի ձեռքից ու մուրացկանութեամբ իրենց գոյութիւնը քարշ տալու։ Զնայած տիրապետող սովին, կառավարութիւնը չի վարանում ծանր հարկերի հաւաքման հրամաններ արձակել, մի հանգամանք, որ աւելի է արագացնում գաղթականութեան գործը։

Կառավարութիւնը ամեն կերպ նպաստում է այդ հոսանքին, նորանոր հարկահաւաքներ ուղարկելով հայաբնակ գաւառները։ Նրանք ամենայն խստութեամբ ժողովում են տուրքեր, տասնապատիկ կաշառք ու քարափուլ առնելով։

Կառճկան գաւառում վերջերս 30,000 դահեկանի հարկ ասպարէզ եկաւ և սկսած են արդէն ժողովել ամենայն խստութեամբ։ Նոյն գաւառի Սորբ գիւղը բոլորովին գաղթեց դէպի Վանի շրջակայք, գիւղացոց արտերը մեծմասամբ քիւրդերը տիրապետած են։ Կութ անունով հայաբնակ գիւղը ամբողջապէս գաղթել է. գիւղում մնացել են քայլելու անընդունակ երեք պառաւ կանայք, որոնք բուերի պէս թառում են անմարդաբնակ գիւղի տներում։ Այդ գիւղում, բացի հինգ տնից, ոչ ոք ցանք չունի և ամբողջ գիւղը վերանորոգելու հապիւ կարողութիւն ունեն։ Գիւղի կալածքների մեծամասնութիւնը գրաւած է Խորոսցի աղայի կողմից։ Ըստուս գիւղի Օսման աղան գրաւել է հայերի արտերի մեծ մասը. այս գիւղը նոյնպէս գատարկուած է։ գիւղացիք գաղթած են Ախլաթի կողմերը։ Գաւառը կամաց-կամաց դատարկւում է հայերից։

Սպարկերտ գաւառի բնակիչները, որոնք մշտապէս ենթակայ են իրենց աղաների բռնաբարութեան, վերջերս սկսել են գաղթել դէպի Մոկս։ Օղանդի Նատուրը, վերջերս գիւղի իշխանների անուններով կնիքներ է շինել և գայլ Միւտուրի աջակցութեամբ գրաւել է նոյն գիւղացոց 9 արտերը։ Գիւղացիք դիմում են միւտուրին որը ծեծելով, վանդում է նրանց։ Կեղծ կնիքներ շինող Փիրօն այժմ արտերի տէր դարձած՝ նըստել է նոյն գիւղը. իսկ գիւղացիք գաղթեցին դէպի Մոկաց գաւառը։ Նոյն գաւառի աղաները գրաւել են հայերի կալածքների մեծ մասը և իրենց տները փոխադրել հայկական գիւղերը։

Ուշտունիքի մասին խօսելն անգամ մեղք է. բռնութեան աշխարհ է. կառավարութեան ձեռքով Հիւսէյն աղան վերսկսեց իր բռնութիւնները: Նրա զըրպարտութեան պատճառով, կորսւած Ջան-Բեզարի համար ձերբակալւեցին նորանոր մարդիկ, որոնք իհարկէ տարիներով կը տառապեն մութ զնդաններում:

Գառ.Գառ, խե՛ղճ Գառգառ... այնտեղ վճռած են խոտ ուտել և չը հեռանալ իրենց գիւղերից: Մարդիկ ամբողջ օրը նախիրների նման ցրւում են լեռները խոտ հաւաքելու, և իրենց զաւակների համար կանաչ տանելու: Միայն մի քանի տներ են գաղթած և այն էլ աշնանից: Պատրիարքարանը 25 լիրա է յատկացրել. Նրանք այդ գրամով վճռեցին սերմ ցանել, իրենք խոտով կ'ապրեն:

Սագի աղան և քանի մի քիւրդեր հրաւիրւեցան Կարա-Սու. Հաջի Ալի-Աղան երազում Փիդայի է տեսել: Գայլը աղւէսներին խորհրդակցութեան է հրաւիրում: Հետևանքը պարզ է... մի մեծ համիսլաժական արշաւանք՝ խուզարկութեան պատրւակի տակ:

ԹԵՐԹՕՆ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԺԱՆԱՊԱՐՀԻՆ

ՀԱԶՐԷՆ

ՆԻԿՈԼ ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ

Լեռների աղջիկն էր նա, մի ցուրտ ու խաւար գիշեր ժայռոտ ու մռայլ այրերից ծնւած: Կանացի ու գրաւիչ ոչինչ չ'ունէր իր արտաքինի մէջ և միայն զգեստն էր մատնում նրա սեռը: Ձմեռը՝ ցրտից և ամառը՝ արևից այրւած նրա դէմքը—բրոնզից ձուլւած մի դէմք—թէև սաստիկ արտայայտիչ էր, բայց անհամբոյր ու խիստ: Սուր քիթը, իրար խառնւած սև յօնքերը, գիշատիչ թռչնի անհանգիստ ու կլոր աչքերը, որոնց վրայ արագ-արագ իջնում էին նոսր թերթերունքները՝ երբ Հազրէն զայրացած էր կամ յուզւած, նրա ուժեղ ու դուրս ցցւած ծնօտը, նոյնպէս շատ հեռու էին կանացիութիւնից և միայն վկայում էին նրա անյողդողդ անդրդւելի հոգին – ժե՛ռ քարերի հոգին...

Երկար ու ջլուտ սրունքների վրայ ցցւած նրա ոսկրոտ իրանը ասես երկաթից ձուլւած լինէր միապաղաղ ու հարթ: Նեղ ու տափակ կուրծքը մայրութեան նշոյլ չ'ունէր. երևի այդ էր պատճառը, որ բնութիւնը զգուշացել էր երեխայ կախել նրա չոր ստինքներից, սերունդ հաւատալ նրա կանացիութեանը:

Հազրէն անզաւակ էր, ժայռերի մէջ դուրս ցցւած մենակ, ու անպտուղ ծառն էր նա:

Եւ նրա քայլւա՛ծքը... ինչպէս չորացած ծառը տեղահան լինի, թափ առնի ու շարժւի: Երկար ու բարակ բազուկները ձգած յետևը, գլուխը բարձր՝ աչքերը միշտ հեռու՝ մէկին սպասողի դիրքով, նա յիշեցնում էր Փափա-քարի վայրի ոչխար, որ հսկում է արածող հօտի վրայ: Այդ ամբողջ ջլուտ կազմւածքը բոլորովին զուրկ էր կանացի այն ալիքաձև, օրօրուն շարժումներից, որոնք բնորոշում ու հմայք են տալիս բեղուն մայրութեանը:

Ինչո՞վ էր նա գրաւում տղամարդկանց, յայտնի չէ, բայց երեք անգամ ամուսնացել էր և երեք անգամ այրիացել, առանց երբէք „ծնունդ նստելու“: Գիւղում կատակով ասում էին՝ „պէտք է ժամում մոմ կպցնել, որ Հազրէն բնաւ երեխայ չ'ունենայ, թէ չէ, ո՞վ գիտէ նրանից ի՞նչ „ջանավար“ պիտի ծնւի“:

Եւ Հազրէն չը ծնեց, մայր չ'եղաւ, մնաց սոսկ “Հազրէ բաջի“ կամ „Գլխակեր Հազրէ“, որովհետև իր ամուսիններից ամեն մէկի հետ հազիւ մի տարի ապրեց: Ասում էին, թէ Հազրէն չորրորդ անգամ սիրով կ'երթար աւետարանի տակ, բայց էլ ցանկացող չը կար, որովհետև նրա ամուսնական անկողնից մինչև գերեզման շատ մօտ էր երևում տղամարդկանց:

„Հազրէ բաջի“, թէ „գլխակեր Հազրէ“ ըստ երևոյթին միևնոյն էր նրա համար. կատակներին պատասխանում էր աւելի կծու կատակով ու անցնում: Բայց մինչև վերջը Գոմեր գիւղում ոչ ոք չ'իմացաւ, որ այդ խստատեսիլ կնոջ ուժեղ հոգին զուտ կանացի քնքշութիւններ ունի, որ նրա սրտում լուռ լալիս է ամուլ յուսախաբ մայրութիւնը, երբեք անգամ գերեզմանի վրայ ծունկ չոքած մայրութիւնը:

—Հողս ձեր գլխին, գեղի զըմէն ճըժերն իմը չե՞ն, ասում էր նա իր ամլութիւնը հեգնող կանանց, և նրա խօսքի մէջ լսւում էր վիրաւոր մայրական սրտի բոլոր թախիծն ու դառնութիւնը: Ասում էր, բայց դէպի փոքրիկ „ճըժերն“ անտարբեր էր, սիրում էր միայն ընտիր-ընտիր հերոսներին, մի Սերոբ մի Մուրադ և վերջերում երազում էր Անդրանիկին, որին տակաւին չէր տեսել:

Հազրէն մայր չը դարձաւ, անզաւակ պառաւեց, բայց բոլոր մայրերից աւելի հռչակ ունէր ո՛չ միայն Գոմեր գիւղում այլ և ամբողջ Սասունում: Եւ այն ոչ այն պատճառով, որ Հազրէն երեք մարդ էր առել և առնական ձևեր ունէր, այլ որովհետև Սասունի ռազմիկ, ալեծուփ կեանքի միշտ մասնակցում էր տղամարդի պէս: Եւ այդ կեանքը նրա համար ընդունել էր երեք վերին աստիճանի պարզ և ըմբռնելի օրէնքների կերպարանք. այսպէս, նա գիտէր, որ Սասունը միշտ պէտք է կռւի, երբ թիւրք և քիւրդեր ոտք կոխեն նրա սահմանները, „որովհետև Ծիրանակատարը, Ընկուզնակն ու Փափաքարը շների տեղ չեն“. երկրորդ՝ կռւելիս պէտք է շտապով լեռը քաշւել և երրորդ՝ միշտ պէտք է յետևից գիւղերը կրակ տալ, որ թշնամին ապաստան ու պաշար չը գտնի:

Եւ Հազրէն կռիւների ժամանակ միշտ ինքն էր կրակ տալիս Գոմեր գիւղը, սկսելով իր սեփական խրճիթից: Այս էր պատճառը՝ որ նա փոխանակ ասելու, թէ Սասունի վրայ չորս անգամ արշաւանք է եղել, հպարտութեամբ բացագանչում էր.

—Ես ա ձեռներովս չորս խետ վառեր եմ Գոմերը: Հերոսական ու չարաբաստիկ 95 թւին Ռէս Գրգօի հետ էր նստել վեր կացել ասում էր ինքը, իսկ Մուշում սասունցի ուրիշ կանանց հետ թիւրք ոստիկանների գլխին առաջին քարը նա էր նետել, այդ փաստ էր:

—Հ՛ը, Հա՛զրէ, էտ չորացած ձեռներով մէկ էլ ե՞րբ պէտք է վառես գեղը, հարցնում էին յաճախ կանայք կատակով:

Հազրէն լուրջ կերպարանք էր ընդունում, ձեռքը մեկնում դէպի սարերը.

—Այ, էն սարերի ասլանը երբ ցած գայ և նշան անի, կը վառեմ.

„Սարի ասլանը“ Անդրանիկն էր, որ քանի տարիներից ի վեր Սասնոյ սարերում, Սասնոյ ծուերի հետ հրսկում էր ժայռերի վրայ թառած ժողովրդին։

—Անդրանիկին տեսե՞լ ես.

Պատասխանի փոխարէն Հազրէն թափով յետ էր ձգում գլուխը, լեզուն բերնի մէջ չփփացնում ասելու համար, թէ չի տեսել։

—Երբ պէտք լինի Գոմերը վառել, նա կ'երևայ, և երբ երևայ, կը տեսնեմ, իմ տղանի, ջանի՞ն մատաղ, աւելացնում էր նա։

—Սևը տանի քեզ, գլխակեր Հազրէ, էդ էր պակաս։

—Սևը դուշմընին տանի, ես ափսոս չե՞մ. մէկ Սասուն, մէկ Անդրանիկ, մէկ էլ... Հազրէ։ Վերջին խօսքի վրայ կանայք հռհռում էին, և Հազրէն հեռանում էր իր հաստատ ուղղաձիգ քայլուածքով։

Եւ մի օր Սարերի Ասլանը ցած իջաւ իր ծուերով...

Սասունը վտանգի մէջ էր, Գոմերը պէտք էր թողնել։ Գիւղը դատարկւում էր և քաշւում լեռն ի վեր։

Անտրտունջ ու համբ ինչպէս ուխտաւորներ՝ այդ երկաթէ ժողովուրդը, թողնում էր իր տունն ու տեղը, վերցնում էր իր ունեցածից ինչ կարող էր, և ձմրան վերջի կատաղի հողմերի շնչի տակ, ձիւնների միջից, սառուց կտրած առապարները չանգռելով ոլոր-մոլոր կաբաւանով խաղում էր դէպի լեռնակատարները և լուծւում ժայռերի ու ամպերի հետ։ Խմբապետի հետ միասին գիւղից վեր դիրք բռնած զինուած տղամարդիկ՝ պաղ ու մռայլ ճակատներով, խոժոռ յօնքերի տակից նայում էին, թէ ինչպէս իրանց ծեր հայրերը, կանայք ու երեխաները անխռով ու հաստատ քայլերով անցնում են առաջներից։ Ոչ ոք պէտք չէր համարում քաջալերական մի խօսք ուղղել խուսափող բազմութեանը, ոչ ոք խորհուրդ չէր տալիս, թէ ո՞ւր գնալ և ի՞նչպէս, ամեն մէկն իր գործը գիտէր, անթիւ տարիներից ի վեր կուի մշակուած ձևն էր այդ—կին ու երեխաներ ծերերի հետ դէպի անմատչելի կատարները, իսկ կռուող մասը՝ հրացանը ձեռքերին քարերի յետևում պատրաստ թշնամու հանդիպելու։ Միայն մի անգամ խմբի կենտրոնում կանգնած գունատ ու խստադէմ տղամարդը գլուխը բարձրացրեց հրացանի վրայից, և ասաց երկու բառ.

—Անցէ՛ք շուտով.

Անդրանի՛կն էր։

—Աստուած քու բազկին զօրութիւն տայ, մռմռաց բազմութիւնը և թափ առած շարժուեց.

Եւ ո՛չ մի տրտունջ ծերերի շրթունքներից, որոնք գուցէ վերջին անգամ էին թողնում հինաւուրց օջաղը, որի հետ կապուած էին այնքան յիշողութիւններ. և ո՛չ մի կաթիլ արցունք կանանց աչքերից, որոնք այնքան տարիների տնտեսութիւնը ձգում էին թշնամուն և նրա հետ միասին գուցէ և իրանց ամուսինների և եղբայրների կեանքը՝ անգամ փոքրիկները, ո՛չ մի ճիչ չէին արձակում, նրանք մրսում էին, կպել էին մայրերի փէշերին և դողդողալով քաշւում էին դէպի լեռների ձիւնոտ կատարները հղնիկների ձագերի պէս։

Լուռ էին. և այդ սքանչելի լռութիւնը ծայրագոյն վտանգի ժամանակ՝ հպարտ ու խորհրդաւոր արհամարհանքն էր, որ լեռների այս քաջերի զաւակները շպրտում էին բռնութեան ճակատին։ Թափորն այն աստիճան լուրջ էր, և դէմքերն այնքան երկիւղած, որ կարծես նրանք ուխտի էին գնում ազատութեան ոգուն, որ թառել էր անմատչելի կատարներին։

Դէպի վե՞ր, դէպի վե՞ր... արծիւնե՞ր.

Սառած ձիւնը՝ չոր ու անախորժ ճռճռոցով փշրւում էր նրանց ոտների տակ, տեղ-տեղ սայթաքում էին, կռանում փայտով կամ ուրագով սառցի մէջ շաւիղ ճեղքում։ Քամին աւելի և աւելի խիստ էր փչում, ձիւնի չոր հատիկները շփում էր երեսներին, նրանք կապտում էին շրթունքները կծոտում չը տնքալու համար և դարձեալ բարձրանում։

Դէպի վե՞ր, միշտ դէպի վե՞ր...

Մի անգամ միայն յետ նայեցին, երբ ծիրի պտոյտները բարձրացան գիւղի վրայ. բոլոր խրճիթները վառւում էին, դարձեալ ո՛չ մի տրտունջ, ո՛չ մի բողոք, միայն մի մեղմ շշուկ անցաւ շարքերի մէջ.

—Հայրէն է, շշնջացին ու լռեցին. էլ ո՛չ մի աւելորդ խօսք չ'ելաւ խլելու, արատաւորելու այն քաջ լռութիւնը, որ նրանց ազատ կամքի ու սրտի գոռոզ արտայայտութիւնն էր։

Եւ հեռուն գիւղը շարունակում էր վառուիլ ծխրտալով, և բոցերը լափում էին այնքան աշխատանք, այնքան տարիների արիւն-քրտինքի արդիւնքը։ Մերթ ընդ մերթ, քամու ուժգին հոսանքը ցրում էր ծուխը, այն ժամանակ երևում էր գիւղում մի կանացի կերպարանք, սև ու կատաղի, ինչպէս չար ոգի որ բոցավառուած մի լաթով վազում էր մի տնից միւսը, մի փողոցից միւսը և ուր նա յայտնւում էր, հրդեհը նրա յետևից վազում էր, ինչպէս հրեղէն վիշապ։ Զարհուրելի էր Հազրէն. տան անգամ նա կորաւ բոցերի մէջ, կարծես հրդեհը լափեց նրա չորացած մարմինը, և տան անգամ էլի յայտնուեց, միշտ վազելով, միշտ կրակ տալով այս ու այն տունը։

Գիւղից վեր՝ աւերակ գոմերի պատերի յետևում շաւած, զինուած խումբը նոյնպէս լուռ էր։ Հրացանները պինդ սղմած ձեռքերի մէջ՝ այդ մռայլ խումբը սպասում էր գլխաւորի հրամանին, որ գլխարկը յետ ձգած՝ ճակատը սառն հովի դէմ, մերթ սուր աչքերով, մերթ դիտակով պրպտում էր հեռուն։

—Պառաւին կը զարնեն, մռմռաց նա կամացուկ. խումբը նայում էր և լուռ էր։

Արդարև, գիւղից աւելի հեռու, հարթավայրերի վրայից դէպի վեր էր խաղում մի սև, ահագին գանգուած, որ հեղեղի պէս լայնանում էր, փռւում, գալարւում և նեղանում, միշտ առաջանալով սպառնալի կերպով։ Թիւրքական բանակն էր այն և քիւրդական բազմաթիւ հրոսակներ. հազարների արիւնարբու մի խուժան, որ առաջանում էր դէպի Գոմեր, դէպի Սասուն, աւերածն ու արիւնը ոտներին կապած։ Եւ ո՛չ մի ցնցում գիւղի վերևում թառած կտրիճների շարքի մէջ. միայն յօնքերնին աւելի խոժոռուեցին ու վար իջան, և աչքերի բիբերը նեղացան աւելի լաւ որոշելու համար թշնամու շարժումները։

—Չէն տուր, տղա՛, հրամայեց գլխաւորը կողքին կանգնած ընկերոջը, պառաւին կը զարնեն մեղք է. թող փախչի, բաւական է։

Եւ մի հայդուկ ահագնադղորդ կանչեց.

—Հազրէ, Հազրէ է՛... Եւ ձորերը թնդացին է՛..է՛..է՛...

—Հէյ, հՕ, եղաւ պատասխանը և գիւղի ծխերի ու բոցերի միջից դուրս թռաւ նա, այն զարհուրելի պառաւը, սև, խանձուած, ու այլանդակ, դուրս թռաւ ու սկսեց վազել լեռնիվեր, դէպի խումբը։

Նա արդէն մօտ էր. ահա կանգ առաւ, երևի, մի վայրկեան շունչ առնելու համար, յետ դարձաւ, հպարտութեամբ ու հրճւանքով նայում էր իր աւերիչ գործի բոսորային գեղեցկութեանը, ապա փոխանակ շարունակելու վերելքը, նա յանկարծ գլխին տուեց երկու ձեռքով և կրկին վազեց դէպի վար, դէպի հրդեհուող գիւղը։

—Հազրէ, Հազրէ՛... կանչեց նոյն ձայնը։

—Իրիցու տուն մնաց, եղաւ պառաւի պատասխանը. քիչ յետոյ նա կրկին կորաւ բոցերի ու ծխի մէջ և ապա գիւղի եզրին մենակ ցցուած սպիտակ տունը բռնկուեց։ Տէրտէրի տունն էր այն։

Խմբապետը գլուխն օրօրեց և նրա խիստ դէմքի վրայ մի ժպիտ խաղաց. այդպէս են փայլում ձմերային արևի գունատ շողերը սառած ձեան վրայ։

—Պառաւին անպատճառ կը զարնեն, մտմտաց նա դժկամակութեամբ և վերստին դիտակն աչքերին դրեց։

Թշնամին մօտ էր. նրա ծայրը հասաւ ու մխեց գիւղի մէջ ու կանգ առաւ. իսկոյն յետոյ հրացանների միահամուռ որոտը խառնուեց բոցերի մռնչիւնին։

Վերևից չպատասխանեցին, ծուխը փակել էր նրանց հայեացքի առաջը. պարանոցներն առաջ ձգած և հրացանների փողերը դէպի թշնամին, նրանք լուռ նայում էին կնճռոտ ճակատների տակից։

Հազրէն մոռացուեց, նա կորաւ բոցերի ու գնդակների տակ։

Թշնամին մի փոքր վարանումից յետոյ շրջան գործեց և նրա մի թևը յայտնուեց գիւղի աջ կողմից.

„Կրա՞կ“ որոտաց գլխաւորի խիստ ու խրոխտ ձայնը։ Հայդուկների հրացանները միաժամանակ չխկչխկացին, միահտմուռ որոտը դընդաց լեռներում, թշնամու ճակատն իրար անցաւ և ընկրկուեց դէ-գի յետ։

„Կրա՞կ անընդհատ„, վերստին լսուեց հրամանը. էլ դադար չկար. կատաղի կռիւ էր։

Գիւղի ծխերի ու բոցերի շուրջը գնդակները սուլում էին, հազարաւոր բանակը ատամները կրճտելով գլուխ էր հանում մերթ ձախ, մերթ աջ ինչպէս շշկլած վիշապ և ամեն անգամ վերի փոքրաթիւ խմբի գնդակների տակ յետ քաշւում։

—Հէյ հօ՛, զարկէք ձեզ մատաղ, սուրբ Ախպէրիկը ձեզ քեօմագ, ջա՛ն, ջա՛ն։

Հազրէ՛ն էր... կուռղների թիկունքում։

Ե՞րբ եկաւ, ինչպէս ազատուեց այս անօրինակ պառաւը, ոչ ոք չը գիտէր, և մտածելու ժամանակ էլ չունէր։

—Կրա՞կ, որոտում էր խմբապետը և լեռները դրնդում էին ոլոր մոլոր արձագանքներով։

—Ջա՛ն, ջա՛ն Անդրանիկ, կրկնում էր պառաւը զարկերի հետ, վազվզում էր դիրքերի վրայ, նայում էր ամեն մէկին առանձին առանձին, հոգին այրւում էր ճանաչելու համար, թէ ո՞րն է Սարերի Ասլանը, „իր տըղան“, բայց գտնել չէր կարողանում և կուռղ կտրիճներից հարցնելու էլ սիրտ չէր անում. նա լաւ լսում էր խմբի միջից բարձրացող այն հպարտ ձայնը, որ „կրակ“ էր հրամայում, բայց չէր կարողանում իմանալ, ո՞րն է խմբապետը, բոլորը հայդուկներ էին, բոլորը կուռում էին հաւասար կատաղութեամբ։

—Վա՞յ քոռնայ Հազրէն, բացագանչեց նա յանկարծ, դՕշդ բաց է, դՕշիդ մատաղ. և նա մի ահագին քար գրկեց ու տնքալով տարաւ տեղաւորելու կուռղներից մէկի առաջը, ուր պատը ցածր էր։ Կռացաւ բայց յանկարծ քարը ցած թողեց, յետ-յետ գնաց, ընկաւ թիկունքին իր երկար հասակով, ձեռքերը տարածեց ու մնաց անշարժ։

—Հազրէ՛... Գնդակը թափ էր անցել կրծքից.

Նրա աչքերը շաղուեցին, և վտիտ մարմինը ձգձգուեց ու աւելի երկարացաւ։ Նա, որի կուրծքն էր ուզում պատսպարել Հազրէն, կռացաւ, ինքշութեամբ բռնեց պառաւի գլուխը և իր ծնկանը դրեց.

—Հազրէ՛...

„Ջո՛ւր...“ Նրան ջուր տուին։ Պառաւն աչքերը կիսաբաց, ձեռները տարածեց և մէկին փնտրում էր։

—Ի՞նչ կ'ուզես Հազրէ։

—Սարերի... Ասլանին... Անդրա... լա՛օ...

Նա չէր իմանում, որ իր գլուխը գրկողը հէնց Սարերի Ասլանն է, և ինքն առանց ճանաչելու, նրա կրծքի առաջ էր քար դնում, նրան էր զոհ գնացել „ե՞ս եմ“ հազիւ մրմնջաց յուզուած տղամարդը. հերոսի աչքերը թացացան, նա աւելի կռացաւ պառաւի վրայ, և որդու պէս համբուրեց նրա սառն ճակատը։

Հազրէի բազուկները յետին թափով փարեցին նրա պարանոցով ու նա հազիւ մրմնջաց.

—Ես էլ... մատաղ... Անդրան. Սարերի Ասլա՞ն—լա՛օ... իմ լա՛օ...

Եւ երջանիկ ժպիտը սառեց նրա գունատ շրթունքներին։

Հազրէն մեռաւ՝ գիւղը վառ վառում էր. թշնամին այդ օրը յետ մղեց ահագին կորուստներով, իսկ համբը կարաւանը ձիւների ու սառուցների միջից շարունակում էր քաշել դէպի վեր, դէպի վեր... արծիւները...

ՂԱՐԻԲ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԴԱՇԻՆՔԸ

Արեան գետերը դադար առան Մանջուրիայի դաշտերում. խաղաղութիւնը կնքուեց։ Ռուզվելտի նախաձեռնութիւնը, չը նայած յոռետես մարգարէութիւններին, պսակուեց կատարեալ աջողութեամբ և ամերիկական Պորտսմուտ քաղաքում գումարուած ռուս ու եապոնական լիազօրների ժողովը երեք շաբաթուայ տենդային սակարգութիւններից յետոյ՝ ծանուցեց աշխարհին իր հաշտարար եզրակացութիւնը։

Տասնևութ ամսուայ արհաւրալի պատերազմի ընթացքում՝ ցարիզմը վերջապէս մի յաղթութիւն տարաւ, Վիտտէի ձեռքով. նա չը տուեց Եապոնիայի պահանջած պատերազմական տուգանքը, չը տուեց ամողջապէս Սախալին կղզին, որի կէսը միայն անցաւ Եապոնիային. նա չը զիջեց և մի քանի այլ, երկրորդական կէտերում։ Այդքանն էլ բաւական էր, որ ողորմելի բիւրօկրատեան աքլորանար, որ շովինիստ մամուլը փչէր յաղթութեան

փողը, խօսել ինչ որ „ռուսական ուլտիմատումների“ մասին, կարծես թէ ցարիզմը չէր, որ արժանացել էր ամբողջ աշխարհի ծաղր ու ծանակին, որ խորտակուել էր Եալուի վրայ, Պորտ-Արտուրում, Լիաօ-Եանգում, Մուկդէնում...

Այսպէս են աշխարհիս բաները. Ռուսաստանը դարձեալ գոհ է, նա գոհանում է և պատրանքներով, բայց տիեզերական պատմութիւնը լուռ ու մունջ իր գործն է տեսնում: Նա արդէն մեծ պետութեան աստիճանը բարձրացրեց Եապօնիային և հռչակեց Ռուսաստանի զինուորական սնանկութիւնը:

Հվէդների, լեհերի, տաճիկների, պարսիկների դէմ՝ ցարիզմը միշտ յաղթական էր, գոռոզ ու ամբարտաւան, բայց ահա մի կազմակերպուած, թէև փոքրիկ, ասիական պետութեան ահարկու հարուածների տակ նա ճարճատում է, յետ է նահանջում, միշտ անպատիւ պարտութիւններով և իվերջոյ ստորագրում է մի անպատիւ խաղաղութիւն. . .

Խաղաղութեան այդ դաշինքը, ուր յաղթողը ցոյց տուեց անսպասելի չափաւորութիւն—նոյն իսկ իր սեփական երկիրը ալէկոծելու րիսկով—տալիս է Եապօնիային անհուն արտօնութիններ: Առանց նուաճողական, աւարառնէչ ձգտումների՝ Եապօնեան շեշտեց միայն իր էական պահանջների վրայ, յանուն որոնց նա պատերազմ էր յայտարարել: Նրա էական նպատակն էր՝ հաստատել իր հովանաւորութիւնը Կորէայի թագաւորութեան վրայ և դուրս քշել ռուսներին Մանջուրիայից, ուսկից ցարիզմի աշխարհակալող ախորժակները սպառնում էին նրա կենսական շահերին: Ծրագիրը կատարելապէս իրագործուած է: Ռուսական նաւատորմը նա ոչնչացրեց, մահացու հարուած տուեց Ռուսաստանի գերիշխանութեանը Ծայրագոյն Արևելքում—ահա ճշմարիտ յաղթանակը: Այդ գերիշխանութիւնը այժմ անցաւ Եապօնիային:

Մի նոր մեծ պետութիւն ծնունդ առաւ Ասիայում. և մի հին մեծ պետութիւն խորտակուեց Եւրոպայում,—ահա, կարճ խօսքով, այդ արիւնոտ պատերազմի նշանակութիւնը: Հիւսիսային հսկայի „անպարտելիութեան“ առասպելը օդը ցնդուեց, բռնապետական շէնքը երերուեց իր հիմքերից ու հասաւ հոգևարքի,—այս եղաւ հետևանքը Ալէքսէեւների ու Պլէվէների յարուցած խայտառակութեան:

Համաշխարհային քաղաքականութեան մէջ այդպիսով տեղի ունեցաւ մի խորունկ փոփոխութիւն, որը յղի է մեծամեծ անակնկալներով: Մարգարէութիւնները բազմանում են հրապարակի վրայ: Գուշակում են, որ եթէ Եապօնիան, մեծ Բրիտանիայի դաշնակիցը, յանձնառու լինի պաշտպանելու Հնդկաստանը,—Անգլիան, ազատուած այդ մեծ փաղութը պահովելու մշտական հոգսից, այլ ևս կը դադարէ՝ Ռուսաստանին իբրև թշնամի նկատել Արևելքում և թոյլ կը տայ նրան իրագործել իր վաղեմի տենչը — գրաւել Կ. Պոլիսը: Անգլիան այդպիսով կը յաջողէ դուրս մղել փոքր Ասիայի սահմաններից իր ամենահաւոր հակառակորդին՝ Գերմանիային...

*

Պատերազմը հրատարակելիս՝ բռնապետութիւնը նպատակ ունէր՝ զինուորական փայլուն յաղթութիւններով շեղել ժողովրդի ուշադրութիւնը ներսում հասունացած խնդիրներից, բայց առաջ եկաւ նրա ցանկութեան ուղղակի հակառակը: Ներքին վերանորոգման խնդիրը միշտ աւելի և աւելի բորբոքւում է. Նա արդէն ընդունել է մի այնպիսի ուղղութիւն, որը քայլ առ քայլ, ճակատագրական անհրաժեշտութեամբ պիտի հասցնէ իր նպատակակէտին, — ժողովրդական գերիշխանութեան:

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ.

Առաջիկայ նոր տարուն պիտի բացւի պետական Դուման: Այդ է ցարիզմի մինչև օրս արած մեծագոյն զիջումը:

Բռնապետութեան „սահմանադրութիւնն“ է դա, Պոբէդօնօսցէւների ու Տրէպօվների „պարլամենտը“, հայերէն լեզուով՝ խ օ ս ա ր ա ն ը, ուր սակայն մարդիկ պիտի հաւաքուեն ոչ թէ խօսելու, այլ լռելու համար..

Աշխարհը ըստ արժանւոյն գնահատեց այդ սահմանադրական կատակերգութիւնը, որը նպատակ ունէր թող փչել, սիրաշահել ազատամիտներին ու արմատականներին և կասեցնել յեղափոխական ճարակող հոսանքը:

Ամենաչափաւոր ազատամիտներն անգամ յուսախաբ եղան: Պետական դուման լոկ խ ո ր հ ր դ ա կ ց ա կ ա ն մի հիմնարկութիւն է պետական խորհրդի կողքին: Նա „պ ա հ պ ա ն ո ւ մ է մ ի ա հ ե ծ ա ն ի շ խ ա ն ո ւ թ ե ա ն հ ի մ ն ա կ ա ն օ ր է ն ք ն ե ր ը“: Նա սահմանում է վարկային (ցէնզական) ընտրողական իրաւունք: Նա տալիս է ընտրելու իրաւունք մի շնչին և այն էլ պահպանողական, յետադէմ փոքրամասնութեան: Այդ իրաւունքից զուրկ է մնում աշխատաւոր ընդհանրութիւնը, որի երկարատև ճիգերի արդիւնքն են արքայական զիջումները: Այնտեղ, դումայի գրեթէ դոնփակ նիստերի մէջ, պատգամաւորները կարող են ամեն բան վիճաբանութեան ու քննութեան ենթարկել, բացի այն հարցերից, որոնք խախտում են միապետութեան հիմքը: Այնտեղ կարող են նոյնիսկ միաձայն որոշումներ ընդունել, սակայն որոշումներ, որոնք պիտի մնան որպէս մեռած տառ,—պետական խորհուրդը և Նիկոլա II-ը կարող են միշտ իրենց veto-ն դնել:

Պատգամաւորները կարող են տնել այլ և այլ հարցապնդումներ, կարող են քննել բիւջէն և ուրիշ բազմաթիւ հարցեր, կարող են ռէֆօրմների պահանջներ դնել,—բայց մինիստրները ազատ պիտի լինին պատասխանելու պարտաւորութիւնից, նրանք պիտի լռեն, իբրև անպատասխանատու և ազատ իրենց կամայականութեան մէջ. . . Ահա այսպիսի մ օ դ ե ր ն բռնապետական սահմանադրութեամբ է, որ կոյր, լրբացած կամարիլլան խիզախում է դիմաւորել Յեղափոխութեանը. . .

Ռուս յեղափոխական շարժումը պիտի կարողանա՞յ արդեօք արժանաւոր կերպով վեր բարձրացնել նետուած ձեռնոցը,—թէ՞ պիտի շարունակէ դեգերել յուսահատեցուցիչ մրափի մէջ, ջլատուած կուսակցական ամուլ ու անպատիւ պայքարներով. . .

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

Խաղաղութեան Միջազգային XIV կոնգրէսը այս տարի գումարուեց Լիւցերն քաղաքում: Նախորդ տարուայ նման, այս անգամ էլ Հայկական դատը պաշտպանելու պաշտօնը ստանձնել էր մեր բարեկամ Պիեր Կիյար: Կոնգրէսը միաձայն

ու բուռն ծափահարութիւններով ընդունեց հեռաբաց-ուրոյցումը։

„Կոլոգրէսը կոնգրէսը կրկնելով նախորդ հանդիսումներուն մէջ արտայայտած ցաւակցութիւնը՝ սիրողաբար խնդրում է Բերլինի դաշնագիրը սոռագրող պետութիւններին՝ վերջապէս իրագործել տալ Հայաստանում եւ Մակեդոնիայում 23 եւ 61-րդ յօդուածներով խոստացուած եւ Մայիսեան ծագրով նշանագրուած բեմորմները։

„Կոնգրէսը յայտնում է իր ջերմ համակրանքը Կովկասեան կոտորածների զոհերին, պսխարակելով ռուս կառավարութեան ոճրագործ անտարբերութիւնը։

—

Կովկասեան արիւնոտ անցքերի առթիւ մեր խմբագրութիւնը ուղղեց քաղաքակիրթ ժողովուրդներին մի շրջաբերական, ֆրասերէն լեզուով, որ ամբողջութեամբ առաջ կը բերենք յաջորդ համարում։

—

Մեզ ուղարկուած է ուսանողական մի շրջաբերական, որից բաւական ենք բերում հետեւեալ հատուածը.

Ընկերներ.

Աւելորդ է խօսել այն ցնցման մասին, որ առաջացրին Հայութեան մէջ վերջերս Կովկասում տեղի ունեցած դէպքերը։ Առաջ եկաւ Հայ ժողովուրդը կորստեան վրանդից ազատելու կարիքը, և ժողովրդի բոլոր խաւերը՝ քան հնարաւորութեան եկան նպաստելու ինքնապաշտպանութեան գործին։ Հայի առաջ ամէն բոպէ դրուած է նրա լինել չը լինելու հարցը։ Միակ միջոցը, որ այժմ կարող է հանել մեր ժողովուրդը իր ծանր դրութիւնից —պինդ լինելն է։ Սակայն մի ամբողջ ժողովուրդ կենդանի լինելու համար անհրաժեշտ մի միջոցներ են հարկաւոր։ Եւրոպայի Հայ ուսանողութիւնը, իբրև մի ամբողջութիւն, դրկուած է ժողովրդին ակտիւ կերպով օգնելու հնարաւորութիւնից։ Սակայն ուսանողութիւնը կարող է օժանդակել նրան գէնք ձեռք բերելու գործում։ Ուստի մենք՝ մի խումբ Հայ ուսանողներս, բանալով մեր մէջ առանց կուսակցութեան խտրութեան՝ հանգանակութիւն դիմում ենք ձեզ, ընկերներ, առաջարկելով նոյնը անել ձեր քաղաքի Հայ ուսանողական շրջանում։ Բոլոր տեղերից ստացուելուց յետոյ գումարը կուղարկուի Ժընեվ Դաշնակցութեան Արևմտեան Բիւրոյին, այդ կազմակերպութիւնը ապացուցած լինելով, որ ինքը ամենաձեռնահասն է Կովկասեան Հայերին գինելու և ինքնապաշտպանութեան գործը վարելու մէջ։ Փողը, որի մասին հաշիւ կը տրուի „Դրօշակում“, պիտի կազմի „ուսանողական ռազմական ֆոնդ“, բացառապէս կը յատկացուի Կովկասում Հայ ժողովուրդը գինելուն։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԶԴԵՐ

ԾՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Հ. Յ. Դ. Արեւելեան Բիւրոն եւ Մ. Բ.-ի Կենտ. Կոմիտէն իրենց վերջին միացեալ նիստում խորհրդածութեան նիւթ դարձրին Զէյթունի խնդիրը եւ երկար ուսումնասիրութիւնից յետոյ եկան հետեւեալ եզրակացութեան.

Նախ՝ Դաշնակցութիւնը ունենալով իր հոդմական տեսի արտաքին պահանջներն ու հասարակական տեսի բարձր իդէալներ՝ ոչ մի կերպ չէ կարող ողջունել կառավարութեան կողմից կովկասեան ժողովրդին տրած այդ փոքրիկ, անհնարելի ճնորհը։ Մեր կազմակերպութիւնը իր ծրագրի մէջ արտայայտել է այն, ինչ նա է ուզում ստանալ զէնքի ուժով, բռնակալ ռուս կառավարութիւնից։ Նրա ուզածը զէյթունի պէս խղճուկ հիմնարկութիւնը չէ, մի հիմնարկութիւն, որի լաւագոյն ձեւն անգամ ամբողջովին ենթարկուում է հանգանգպեսի իշխանութեան։ Նա, իբրեւ հայ ժողովրդի մեծագոյն մասի քաղաքական բարձր իդէալների հերկայացուցիչը, չէ կարող որեւէ մասնակցութիւն ունենալ զէյթունային չնչին ու խարուսիկ վերանորոգութիւնների հարցերում։

Սակայն, տրամենտ հայ հասարակութիւնը, կամայ թէ ակամայ, պիտի մասնակցէ գաւառներում կայանալիք խորհրդակցութիւններին, ուստի կը կամենայինք որոշ ցուցմունքներ տալ նրան՝ զէյթունային հիմնարկութիւնը հնարաւոր եղածին չափ մօտեցնելու ժողովրդական պահանջներին ու պահանջներին։ Ամենից առաջ պէտք է աշխատել ամբողջ ժողովրդին—ուներ թէ չունեցող—մասնակից անել զէյթունային գործին։ Ամեն մի անհաս, անկախ իր պարապմունքից, իր գայթիմանակութիւնից՝ ընդունում է իր վրայ երկրի ընդհանուր տնտեսական և քաղաքական կեանքի այս կամ այն մասը։

Հասարակական ամեն մի երեւոյթ իր արձագանքները ունի հասարակութեան բոլոր խաւերում ու բոլոր վայրերում։ Եւ որովհետեւ չը կայ մինը, որ ուղղակի, թէ անուղղակի կերպով շահագրգռուած չը լինի հասարակական ամեն կարգի խնդիրներում՝ (հերկայ դէպքում՝ զէյթունցիներ), ուրեմն եւ չը պէտք է զսնի մէկը, որ զուրկ լինի հերկայացուցիչ ընտրելու եւ ընտրելու իրաւունքից։ Արդարութեան տեսակէտը—որին պէտք է ենթարկի ամեն մի օրէնք—հարկադրում է մեզ ընդունել եւ առաջարկել ընդհանուր ձայնատուութեան սկզբունքը։ Ուրիշ խօսքով՝ վերացնել ամեն տեսակ ցենզի գործադրութիւն։ Եւ որպէսզի այս ընդհանուր ձայնատուութեան մէջ մեծամասնութիւնը անկարող լինի հնարել փոքրամասնութեան՝ պիտի մտցնել մաքուր համայնական միութիւնների սկզբունքը, այսինքն պիտի աշխատել, որքան կարելի է, հասարակութիւնը փոքր մասերի բաժանել՝ իւրաքանչիւրին տալով իր ուզած կանոնագրութիւնն ու կառավարելու իրաւունքը։

Ռուսաստանում մինչեւ այժմ գոյութիւն ունեցող զեմստվային հիմնարկութիւնները զսնելով ոստիկանական իշխանութեան հերոյ եւ ամեն կերպ կախումն ունենալով կառավարութիւնից՝ չէին կարողանում մազաչափ անգամ առաջ տանել ժողովրդական ապահովութեան գործը։ Ուստի ամեն կերպ պէտք է աշխատել, որ զեմստվոցները որեւէ կախումն չունենան արտիշնստրատիվ մարմիններից։ Վերջինների միջամտութիւնը զեմստվային խնդիրների մէջ, իբրեւ միանգամայն վնասակար միջամտութիւն՝ անպայման կերպով պէտք է ժխտել ու դրա փոխարէն պիտի պահանջել զեմստվային հիմնարկութիւնների համար տեղական օրէնդրական իրաւունք։

Իւրաքանչիւր զեմստվային համայնք պէտք է իրաւունք ունենայ իր տեղի համար օրէնքներ մշակել եւ գործադրել։—Այս բոլորին պիտի կցել նաեւ այնպիսի պահանջներ, որոնք թէեւ զուտ զեմստվային չեն, բայց որոնց հերկայութիւնը անհրաժեշտ է զեմստվային գործունէութիւնը արդիւնաւէտ դարձնելու համար։ Պիտի անպայման կերպով առաջ տանել խօսքի, մտքի եւ ամեն տեսակ ժողովների ազատութեան պահանջներ, որպէսզի ամեն մի անհաս կարողանայ ազատօրէն իր կարծիքը յայտնել զեմստվոյին ենթարկուած բոլոր խնդիրների մասին։

Առանց այս նախապայմանների՝ զեմստվոն կլինի մի մեռած հիմնարկութիւն, մի ճաքր բեռ ժողովրդի յոգնած թիկունքին, մի տեսակ մտաճոգութիւն նրա հազարաւոր մտահոգութիւնների շարքում...

Ամփոփելով մեր տեսակէտները՝ պահանջում ենք. 1) ընդհանուր եւ հաւասար ձայնատուութիւն. 2) ամեն տեսակ ցենզի վերացում. 3) մաքուր հողային միութիւններ. 4) զեմստվային հիմնարկութիւնների կատարեալ անկախութիւն. 5) օրէնդրական իրաւունք. 6) խօսքի եւ ժողովների ազատութիւն։

Հ. Յ. Դ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

Ներկայ հոկտեմբեր ամսից սկսած՝ „Դրօշակը“ պէտք է հրատարակի ամիսը երկու անգամ, իւրաքանչիւր ամսի 15-ին եւ 30-ին, պատշաճելով նախկին ծաւալը եւ դիրքը։

ՆԻՒՐԱՏՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ *ստացած է՝*

Շվէյցարիա.—Նուէրներ անցորդից Փր. 20, Մարկոսից 25։

Գերմանիա.—Վիւրթէմբուրգի ուսանողութենէ՝ ծղրամար Ք. Ս.-ի 20 Փր.։

Ռուսաստան. — ԴՐԱՄ կոմիտէէն՝ երկու անգամէն ֆր. 12,000: Այգեստանցի Ա. Ա.-ից (50 ռուբլի) 132, 50

Պարսկաստան—Գետափից Վանունու միջոցով 127,65 ֆր. Նուիրատուներն են „Յոյս" խմբից անդամավճար, ծնողագործ եւայլն 220 դրան, Փնջիկեան, Ք. Պետրոս 10, Թունի 10, Վարդան 10, Գումար 300: Նոյնի միջոցով, նուէր երկսեռ սաներից 90 ֆր. Նոյն տեղից. Ց-ի միջոցով պապակաղրամ Ց.-ից 50 դր. Նուէրգիւղի Տ. Դ. Քահ.-ից 50 դր. մի քանի հաւակրողներից 80 դր.:

Ընդհանուր գումար ֆր. 12491, 50

ԱՅԳԵՍՏԱՆԻ կոմիտէն՝

Յունուար, Փետրուար, եւ մարտ ամիսների 1905 թ.

Ղարիբ խ. ամսավճար 25 ռ. 72 կ. Յոյս խ. 28. 50, Դարդմանիք Ա. խ. 10. Դարդմանիք Բ. խ. 4. 20, Ոսկեհանք Ա. խ. 4. 50, Ոսկեհանք Բ. խ. 3. 50, Փառանձեմ Ա. խ. 2. 80, Մարշիմոն Ա. խ. 30, Լուսընթաց գիւղի Վրէժ ա. ք. գ. դ. խ. 18, Պանդուխտ խ-ի միջ. երեկոյթից 50, Կամար խմբերից 30, Սաղամից Նուէր 10, Կանոնի խաչ գիւղի խ. 39, Վանդակ գ. խ, 35. 55, Ամլոց գ. խ. 47. 40, Խաչ. Ղար-ից տուգ. 200, Գետաքերան գ, Փարոս խ. 20, Վրէժ Ա. եւ Բ. 6. 20, Դարբին Ռ. խ. 16. 50, Մարշիմոն Դ. խ. 11. 60, Աղշաւանք Ա. խ. 5, Լիճ խմբից 8, Պանդուխտ Ա. խ. 24. 30, Բաֆֆի Ա. խ. 31. 10, Բաֆֆի Բ. խ. 6, 60, Լիճ Բ. խ. 3. 50, Լիճ Բ. խ. անդամ Եվանից նուէր 3, Բաֆֆի Բ. խմբի (աւետիքից) 17. 50, Ղարիբ, Մարշիմոն Բ. եւ Արդար խ. (աւետ.) 32, Բաֆֆի Ա. խ. (աւետիքից) 34. 50, Դժոխք Ա. խ. 20. 80, Գետ գիւղի Մռաւ խ. 12. 40, Գետ գ. Քեափազ խ. 9. 80, Նոր Սերունդ խ. 7. 20, Կռիւ խ. 6. 30, Ներկայացուց. տուգ. 1. 10, Նուէրներ Պարտիզակ գ. Ա.-Բէկից 10, Պարտիզակ գիւղի ուսուցչից 10, Պարտիզակ գ. հասարակութիւնից 29. 88, Անտոն գ. Թ.-Բէկից 5, Նորաշէն գ. հասար. 40, Եղեսիայ գ. մի քանի նուիրատ. 7. 20, Պարտիզակ գ. քահանայից 5, Անտառ գիւղից 1. 60, Նամուս Բ. խ. 2. 80, մի պարոնից 10, Եղեսիա գ. Կայծակ խ. 8. 65, Վարդաշէն գ. Վիշապ ա., բ., գ. եւ դ. խ. 5. 75, Մաժակի Առիւծ Ա., Բ. խ. 10, Անտոնի Արծիւ խ. 6. 70, Մամրուտի Աշոտ Բ. խ. 4. 35, Նամուս Ա. խ. 4, Մարշիմոն Ա. խ. 34, Փինանս Ա. խ. 27, Թորգոմ Բ. խ. 2. 90, Շիրակ խ. 6. 50, Սալմաստ խ. 10, եւս 5, Մուսուտ գիւղի հասարակութիւնից նուէր 7. 55, Ն" խ. 7, Բարձր-խաչ գ. Յոյս Ա. խ. 7, Գ. խ. 7, Մ. Խոջ-ից նուէր 3, Դարբին խ. միջ. նուէր 9. 50, եւս 4, Աղշալոյս Ա խ. 7. 95, Զէյթունի դրօշ խ. 32. 50, Զէյթունի դրօշ խ. միջ. Գար. մօրից նուէր 5, Բերդաձորի Սրբերք Ա. խ. 3. 50, Վանդակը Բարակապ Ե. խ. 3. 60, Կռիւ Ա. խ. 9. 5, Գ. պարտիզակից նուէր 7. 15, Պարտիզակի Փայլակ խ. 3. 10, Ցեղուցի Վանան խ. 2. 20, Բարձր գ. Շահէն Ա. խ. 3. 40, Բ. խ. 3. 30, Բ. Պարտիզակից նուէր 5. 65, Ա. Պարտիզակից Կ.-բէկից նուէր 5, եւս Գ.-բէկից 5, Ա. իւզբաշու հայթայթած 3, Բարձր-գ. նուէր 7, Թորգոմ Ա. խ. 3. 20, Գետաքերանի Փարոս խ. 20, Բարձր խաչի Յոյս Բ. 5, եւս 10, Դաշտավայրի Երկաթ Ա. խ. 1. 80, Բ. խ. 1. 80, Գ. խ. 60 կ. Պարտէզ գ. Ծաղիկ Ա խ. 4. 90, Ոսկանապատ գ. Մնահիտ խ. 6 50, Դժոխք Բ. խ. 10, Ենիւից նուէր 5, Մարշիմոն Ա. 14. 50, Դարդմանիք Ա. խ. 20, Բ. խ. 8, Ոսկէհանք Ա. խ. 7, Բ. խ. 6. 55, Փառանձեմ խ. 6, Աշոտ Երկաթ խ. 5, Մամրուտ գ. Զինւոր խ. 2. 50, Բարափ գ. Կարկուտ Ա. խ. 4. Բ. խ. 4. Գ, 3, Դ. խ. 3, Ե. խ. 3, Նամուս Դ. խ. 10, Աննենդոր գ. Հրայր (Դժոխք) խ. 1904 թ. ապառիկ 25. 75, Սալմաստ խ. 5, Գետաքերանի Փարոս խ. 20 եւս 20, Նամուս Ա. խ. 5, Ա. Փ.-ից դուզանք 5, Դարբին խ. 14, Փինանս Բ. խ, 17. 25, Ղարիբ խ. 5, Աղշալոյս խ. 6. 80, Սամոյ արիւծ խ. 4. 50, Ղարիբ խ. 1904 թ. ապառիկ 16. 11, Ց. Շ. Դ-ից նուէր Բաթման Ղլիճի միջոցով 5, Ս-ից նուէր Հրահատի միջոցով 6, Նոյշէնից նուէր Ոսկանի միջ. 8, Մէկից 8, պ. Ս. Մ-ից 1905 թ. տարեվճար 100, Շիրակ Ա. խ. 6. 10, պ. Եղայից նուէր 3000, Շիրակ Բ. խ. 4, Նամուս Բ. խ. 3. 60, Երկաթ Բ. խ. 10. 80, Բաֆֆի Գ. եւ Դ. խ. (երեկոյթից) 20, Աղբիւր Ա. խ. 3. 60, Մուրճ Ա. խ. 8. 60, Կռիւ Ա. խ. 8, Նամուս Ա. խ. 5. 30, Գ. խ. 2. 60, Արիւն խ. 5. 15, Խայթ խ. 5. 80, Ամրոցից, Հակի արծւից, ծորակից, ուխտատեղից 40: Գումար 4794 ր. 66 կ.

ՉԻՆԱԲԱՇԽ. ՅԱՆԶՆԱԽՄԲԻ 1905 թւի փետրուարի 23—ապրիլի 1-ը: Սիրոտինից յօգուտ տեղական պանէսի մօնդի 50, Աբրոից 100, Արսօից 100, Հ-ից 100, 3-ից 50, Լ-ից 50, Դ. Լ-ից 100, Մի տիկնոջից 100, Վարդ-ից 50, Թ-ից 120, Գեսաբէնից 80, Աթ-ից 100, Մ-ից 35, Մ. Ն-ից 100, Աղաջանից 100, Մակիչից 200, Պլ-ից 25, Տիկնոջից 5. Ես-ից 10, Նիկ-ից 150, Աւեսիմից 150, Թոմանից 50, Վ. Մ-ից 50, Աղ-ից 100, Պ. Ա-ից 60, Յովհ-ից 25, Գ. Խ-ից 25, Գեսաբէնից 80, Գործարանից 100, Սեարովբից 100, Գ-ից 25, Նիկ. Հ-ից 75, Մի պարոնից 25, Ս. Կ-ից 50, Կ. Ա-ից 35, Մակիզից 70, Մ. Ց-ից 50, Սիմէոնից 10, Ամիրից 50, Ա. Մ-ից 25, Ց-ից 100, Մկրտումից 30, Ս. Պ-ից 75, Տիկ. Հ-ից 50, Աբրահամից 50, Մ. Ս-ից 200, Բէզլանից 25, Դար. 75.

Գումար 3390 ր.

ՆԱԽԱՀԱՆԳՍՏԻ կենդր. կոմիտէն՝

Հանգանակութիւնից—Յակոբից 100 ռուբ. Մելիակից 50, Եգիտից 25, Բոյանից 15, Բեռժից 100, Կ-ից 10, Տէր 15, Զինից 50, Ց.Փ. 25, Բայ 50, Կ. Հ. 50, Զոնից 50. Ա. Ս· 50, Ց. Խ. 50, Հարկից 50, Աւոյից 200, Նապալից 25, Միհրանից 100, Ց. Բ. 50, Կ. Փ. 25, Փ. 25, Փուռից մի կոթ, Վ. Բ. 20, Կ. 30, Մ. 30, Ս. 25, Մ. 100, Մ. 50, Տիրոյից 15, Ա. Տ. 10, Բաքից 50, Տէր-Բ. 25, Ա. Կ. 50, Պ. Խ. 15, Բուլբուլից 25, Յարութիւնից 50, Բէգրց 25, Բէօմուրչից 50, Եղբայրներից 100, Զիլից 100, Ա. Պ. 25, Ս. Մ. 50, Սպայից 50, Թամամից 25, Սարուխանից 50, Կ. Մ. 25. Նուրին Թարից 100, Բ. Տ. Մ. 10, Եղբ. Ս. 150:

Գումար 2380 ր.

ՏԵՂԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ՝ Յուլիս ամսայ—Յոյս խ. անդ. Զ· ամսվճ. 12, Գէորգ Զաւուշ. 20, Առիւծ խ. անդ. Ֆ· նուէր 3, Մտրակ խ. 32, Եփրաս խ. 10, Կարին խ. նուէր 18, Կարին խ. 22, Խաչալիս խ. 25, Բազրատունեաց Տպագրն խ. 17, Մակսին խ. 123. 50, Ազգիւր խ. 9, Կարէջ խ. 58, Սիփան խ. 54, նուէր նոյն խ. 14. 50, Ներբոլի խ. անդ. Մ. տուգանք 1: Գումար 419 ր.

„ԴԱՇՏ" ԿՈՄԻՏԷԻ 1905 թ. յունուարի 1-ից մինչեւ յուլիսի 15: Սուրէն 150 ռուբ. Հայլ 60, Արմենակ 90, Ժակոբիկ 175, Սիմեցի 100, Բարկէն-բժ. 90, Աւարաս 25, Զարմայր 60, Մեմեն 80, Մասիս 50, Ալիշան 12, Կիւրեղ 12, Թադ 100, Մարինա 30, Մամիկ 40, Ծիածան 10, Լուսեղէն 25, Լոյս 25, Բել 12, Աբրահամ 10, Վանցի 25, Արտաւազդ 50, Զիրոպ 25, Սպարապետ 10, Եղբարք գիրք 200, նեսեսական խմբերից՝ Պարբեր 18, Առիւծ 27, Բաղալեր 40, Աշակերտ 3, Յոյս 16, Աղեղ 14. 50, Վրէժ 48, Լորիկ 66, Յաւաղսպէտ 1. 50, Հայկազեան 77. 50, Ազգիւրեան 108, Ման 89, Անդրանիկ 6. 50, Խլեր 25, ՄԱՍԻՍ ԲԱՂԱՔԱՑԻ Ալ. միջ. Վասակ խ· 132. 40, Լեւ 18, Լեւ 51, ԱՂ ԲԱՂԱՔԱՑԻ Ղեւոնդեան խ. 294. 60, Առիւծ խ. 68, Արծրունի 59, Արշակունեան 54: Գումար 2683 ր.

Ընդհանուր գումար 5482 ռուբ.

ԺԼԱՅԻ Կ. Կ.

Ժլայի Կ-ի յունիս ամս. ենեսեսական խմբ. Կարս 10. 50, ռուբ. Մայրեր 7. 15, Աւարաս 10, Վազգէն 2. 30, Թորգոմ Բ. 35, Պէսօ 15. 10, Մայրեր վինակ 18. 20, Անդրանիկ 32. 15, Յոյս 12. 35, Աւարաս 10, Շէկ-Աւանի Թռուց. 11. 25, Կարս Լեւկոյթից Եւ ամսավճար 54, Մայրեր 5. 65, Թորգոմ Բ. 4. 10, Շամիլից նուէր 20, Նորածին Ենք. Կ-ի մնաց. առ 1-ն յունիսի 126. 96, Լեւ ամսավճար 100, Բուժարան Կ-ի Առիւծ 22. 25, Յոյս 16. 75, Լեռնցի 16, Ց. Եղ. նուէր 10, Աւեայր 19. 50, Ազիզ 4. 50, Լեռնցի 18, Յոյս 13. 75, Վրէժ 9. 60, Կարիչ 7· 95, Առիւծեանք 41. 85, Սեւայր 39, Սմբատ 53, Լեռնցի 15. 50, Սմբատ 27, Առիւծ Կ-ից 50, Կրեսացի Ենք Կ-ի Աբիսաղար խ. 3. 85, Արամ խ. 3, Նազ եւ Պաւաւոր 34. 45, Արաս Կ-ի Հզօրիկ 4, Կրակոս խ. 11. 50, Համր խ. 7. 50, Կարին խ. 7, Թուանիկ 6. 25, Սերգարից նուէր 2, Պողպատից 5, Հզօրիկ խ. 4. Կրակոս 11. 50, Համր 7. 50, Կարին 7, Թուանիկ 5, Պողպատից նուէր 5, Բաչից նուէր 5. Երեկոյթից 66. 20, Հզօրիկ խ. 6. 50, Կրակոս 11. 50, Համր 7, Թուանիկ 5, Փարուան 9. 30, Առիւծ 5, Աստ. Կ-ի Մամիկոնեան 4. 50, Եռանդ 30, Ն. Պ. նուէր 4, Ց. Բ. նուէր 25, Հանգանակութիւնից 2, Հզօրիկ խ. 9. 50, Կրակոս 11. 50, Համր 7, Թուանիկ 5, Փարուան 8. 30, Առիւծ 5, Մամիկոնեան 4. 70, Եռանդ 15, Փարուան 32. 20:

Գումարն 1208 ռ. 41:

ԱՏՐԱՊԱՏԱԿԱՆԻ Կ. կոմիտէն

Ստացել է Միհարէթում 1904 թ. հանգանակութիւնից Ս. Ս. 100 դր. Ս. Մ. Բ. 120, Պ. Մ. Պ. 80, Ա. Բ. 50, Ս. Կ. 100, Մ. Ա· 50, Կ. Ց. 50, Գ. Գ. 70, Ա· 20, Ղ. Հ· 20, Հ. Ս. 10, Ց. Խ. 20, Պ. Ս. 50, Ա. Տ. Մ. 10, Ա. Վ. 10, Ա. Վ. 10, Հ. Թ. 10, Խ. Մ. Հ. 20, Զ. Ա. 10, Մ· Ղ. 80, Կ. Ա. 20, Գ. Վ. 10, Վ. Մ. 10, Դ. Մ. 10, Մ, Ց. 10, Մ.Ց. 15, Խ. Ս. 10, Ա. Բ. 70: Գումարն 1045 դրամ:

Միհարէթում 1904 թ. դեկ. 1-ից—1905 թ. յունիսի 1. նեսեսական խմբ. Կարս 86, Զարեւանդ, 91, Աղբակ 104, Զէյթունիկ 212, Զօլա 32. 25, եւս 90, Արաքելոյս 128, Խարիսխ 42, Բրիստափոր Ա. խ. 12. 50, Բրիստափոր Բ. խ. 26, Բրիստափոր Կանաչց խ. 37. 50, Մի նեղկայացումից 866: ԾԱՌԱՍՏԱՆԻ Ենք. Բարդուղիմէոս 111. 10, նոյն խ. միջ. տիկ. Զարուհուց 99, Թօլօճեան 116, նոյն խ. նուէր 200, Գեորկ 217, Տարածող 379, Ուսկոկ 43. 50, Աւետիսեան 48. 50, Անդրանիկ 110, նոյն խ. նեղկայացումից 450, Աւաւուլ 69. 50, Մուրեղ 51. 50, Լեւոն 89:

Գումար 3711 ղ. 35 կ. (Շարունակելի)

Մեր խմբագրութեան հասցէն՝

Rédaction du „DROSCHAK", Genève (Suisse)